

ሆሊዮርት

ሥራዊት

ሙሪዝግ

ሙሪዝግ ሙሪዝግ ሙሪዝግ
ሙሪዝግ ሙሪዝግ ሙሪዝግ

marzig
SPORTS MAGAZINE

37-ጥፋ ሙሪዝግ, 2018, ጥፋጥፋ 410

VOL. XXXVII N° 410

ጥፋጥፋ ሙሪዝግ - ጥፋጥፋ ጥፋጥፋ





Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՒ ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

22-24 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչությունը ներկայացնող պատուիրակությունն մր, գլխավորությամբ արեւնապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Բագրատ Եսայեանի Անդո Պահարեանի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան արեւնապետ եղբ. Գաւրի Յակոբեանի, շնորհատրական հանդիպումներ ունեցաւ Հայաստանի նախագահին, վարչապետին եւ Սփիւռքի նախարարին հետ:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանի հետ հանդիպումին ընթացքին, 22 Մայիսին, արժարժուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի ծրագիրները եւ համա-Հ.Մ.Ը.Մ.Ի ակաւան 11-րդ բանակումին մանրամասնութիւնները:

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՄՕՏ

Օր մը ետք, 23 Մայիսին, պատուիրակութիւնը այցելեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ իր շնորհատրութիւնները փոխանցելով անոր յաջողութիւն մատրեց երկրի զարգացման ի նպաստ անոր աշխատանքներուն:

Իր կարգին, վարչապետ Նիկոլ Փաշինեան գնահատեց Հ.Մ.Ը.Մ.Ի դերը հայապահպանման աշխատանքին մէջ եւ կառավարութեան անունով պատրաստակամութիւն յայտնեց աջակցելու միութեան 100-ամեակի ծրագիրներու իրականացման:



Հանդիպումին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան արեւնապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան վարչապետին ներկայացուց միութեան 100-ամեակի շեռնարկները. որոնք Հայաստանի մէջ քեղի պիտի ունենան 19-29 Յուլիս 2018-ին: Մկրտիչեան յայտնեց, որ այս շեռնարկներուն եւ համա-Հ.Մ.Ը.Մ.Ի ակաւան 11-րդ բանակումին մասնակցելու համար հայրենիք պիտի այցելեն միութեան 110 մասնաճիւղերը ներկայացնող 1200 սկաւորներ: Ապա, ան վարչապետը պաշտօնապէս հրաւիրեց մասնակցելու 100-ամեակի գլխատր հանդիսութեան: Վարչապետ Փաշինեան իրեն ուղղուած հրաւերին քուտա դրական պատասխան:

ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄՕՏ

Յաջորդ օր, 24 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.Ի պատուիրակութիւնը այցելեց Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարար Միխայիլ Հայրապետեանին: Այցելութեան ներկայ գտնուեցաւ նոր նշանակեալ փոխ նախարար Բարգէն Տէր Գրիգորեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի պատուիրակութիւնը նախ իր շնորհատրութիւնները փոխանցեց Սփիւռքի նախարարին անոր նշանակման առիթով: Ապա, անոր ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի շեռնարկները եւ անոնց մասնակցութեան համար հայրենիք այցելող մեծաքիւ սկաւորները, ծնողներն ու բարեկամները:

(Շար.ը Գ. կողք)

ՆԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹ-ԱԿԱՆ ԸՆԴՏԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



Հ.Մ.Ը.Մ.ի 100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ՄԱՐԶԻԿ»Ի ԲԱՅԱՌԻԿ ԹԻՒՈՎ

- ◆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ
- ◆ ՆԿԱՐՆԵՐՈՒ ԳՈՒՆ ՀԱԲԱՔԱԾՈՅ
- ◆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ, ԵԼՈՅԹՆԵՐ
- ◆ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 11-ԲԴ ԲԱՆԱԿՈՒՄ

ՅԱԶՈՐԴԻԻ



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
Իւրայատուկ աշխարհ **2-3**

ԱՆԴՐԱԳԱՐՁ
«Նահատակ ցեղի անմահներ»ու
կամաւոր բանակը **4-7**
Հարիւրամեայ Հ.Մ.Ը.Մ.ի
տեսլականով **23**
Նաւասարդեանի այս տարուան
նորութիւնը` «Հ.Մ.Ը.Մ.ի հրաշքը» **30-33**

ԴԵՄՔԵՐՈՒ ՀԵՏ
Համլէթ Չրախչեան **7-9**
Գօգօ Պալեան **9-11**

ՄԱՍՆԱԾԻԻՂԵ ՄԱՍՆԱԾԻԻՂ **12-40**

Խմբագիր: Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողարեան, Մարո Քէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Շահինեան:

Վարչական կազմ: Պատրիկ Կիւլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիլվա Սաղրեան, Յարութ Ալմանճեան, Նազօ Հապիպեան, Ռիթա Օդոլեան, Արլին Շամնասեան:

Էջադրում եւ ընդհանուր չեւաւորում: Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէրեան» րպարան, Պէյրութ, Լիբանան:

Քաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաժանորդներու: Տարեկան քաժանորդագրութեան սակ նշուած է` Լիբանան 32 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հարապաճառի սակն է 5000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (ինք. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրասխանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» ամսաթերթ կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեւան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org 80486 Պուրճ Համուտ, Լիբանան Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org

ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ԱՇԽԱՐՀ

Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհ մըն է, որ ամբողջությամբ ծանօթ չէ բոլորին: Աւելին է ան՝ քան սովորական միութիւն մը, ուր կը յաճախեն որոշ տարիքի, որոշ հետաքրքրութիւն ունեցող մարդիկ միայն:

Աւելին է ան՝ քան միութիւն մը, որուն նպատակները կը սահմանափակուին ժամանակի մը կամ միջավայրի մը մէջ միայն:

Հ.Մ.Ը.Մ. նաեւ աւելին է՝ քան կազմակերպութիւն մը, որ կանոնագիրի չոր ու ցամաք օրէնքներով կ'առաջնորդուի միայն:

Հ.Մ.Ը.Մ. այս բոլորէն աւելին է, որովհետեւ ան իրայատուկ աշխարհ մըն է, իր մթնոլորտով, գործելու եղանակով եւ գործողներու մտայնութեամբ: Մահմանափակումներ չկան այդ աշխարհին մէջ: Չորս տարեկանէն մինչեւ իննսունչորս տարեկանը կրնայ անդամակցիլ անոր: Հետաքրքրութիւնները եւս այլազան են՝ մարզականէն սկսած մինչեւ արհեստագիտական: Բոլորը ընելիք ունին այդ աշխարհին մէջ: Իրաքանչիւրը իր կարողութեամբ եւ կարելիութեամբ: Մէկը կը հարստացնէ միւսը: Մէկը կը ծառայէ բոլորին, իսկ բոլորը՝ մէկուն:

Տեսարար բարձրանալու եւ ուրիշներն ալ հետը բարձրացնելու Հ.Մ.Ը.Մ.ական նշանաբանը կեանքի ոճ է այդ աշխարհին մէջ: Բարձրանալը անձնական ճիգ կը պահանջէ, մինչդեռ բարձրացնելը անձէն դուրս գալու անհրաժեշտութիւն կը պարտադրէ: Բարձրանալը կ'ենթադրէ անհատական շահու ապահովում, բարձրացնելը՝ անշահախնդրութիւն: Հ.Մ.Ը.Մ.ականը անշահախնդիր տիպար է, այլասէր մարդ է, «մի՛շտ պատրաստ» օգտակար դառնալու իր նմանին, մարդուն: Ու բնական է, որ մարդկայնութեան հունտը ցանող նման արժէքներ աշխարհագրական որեւէ սահման կամ ժամանակ չճանչնան եւ օգտակար ըլլան բոլորին, ամէն տեղ ու ամէն ժամանակ:

Հ.Մ.Ը.Մ. կանոնագրային յօդուածներու մէջ կադապարուած կազմակերպութեան մը պատկերը չի ներկայացնէր երբեք, որովհետեւ ան կանոնագիրի տառ ու յօդուած ըլլալէ առաջ՝ ոգի է, զաղափար է, արժէքներու



աշխարհ մըն է, ուր տիրապետող բարոյական ուժի եւ ասանդութեան վրայ հիմնուած անգիր սկզբունքներն են, Հ.Մ.Ը.Մ.ական մարդու տիպարային յատկութիւններն են:

Իրայատուկ այդ աշխարհին տեսանելի բաժինը գործող, շարժուն տարրերն են՝ սկստուներ, մարզիկներ թէ վարչականներ: Սակայն, կան նաեւ այդ աշխարհը սնանող, պահող ու պահպանող մարդիկ, լուռ եւ անտեսանելի տարրեր, որոնց մա-

սին կ'արժէ անդրադասնալ անպայման:

Ծնողներն են անոնք, Հ.Մ.Ը.Մ.ի իրայատուկ աշխարհին անգնահատելի ուժն ու հարստութիւնը, առանց որոնց 100-ամեայ այս միութիւնը երբեք պիտի չկարենար յարատեւել, յառաջդիմել եւ կատարելութեան դիմել:

Ծնողներ, որոնք իրենց ամօրեայ աշխատանքի հեքին եւ տաղտուկին մէջ, յանձն կ'առնեն շարաքը անգամ մը, թերեւս ալ աւելի, զոհել իրենց ժամանակն ու հանգիստը, իրենց զուակը տանիլ քիլոմէթրեր հեռու գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի մէկ ակումբը եւ սպասել մինչեւ շաբաթօրեայ հաւաքին կամ մարզական փորձին աւարտը, զանոնք տուն վերադարձնելու համար:

Ծնողներ, որոնք ընտանեկան արձակուրդներ կը խանգարեն՝ ապահովելու համար իրենց զուակներուն մասնակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի ձեռնարկներուն, տարեկան բանակումներուն թէ միջ-մասնաճիւղային մարզախաղերուն:

Ծնողներ, որոնք նիւթական հագարումէկ զոհողութիւններ յանձն կ'առնեն, որպէսզի իրենց զուակները կարենան համա-Հ.Մ.Ը.Մ.ական մեծածախս մարզախաղերու կամ բանակումներու մասնակցիլ, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի անդամներուն հետ շփուիլ, հայութեան եւ Հայաստանին ծանօթանալ:

Ծնողներ, որոնք յաճախ իրենց զուակներուն հետ միասին կը ծառայեն միութեան, իբրեւ վարչական անդամ, ծնողական խորհուրդի կամ Սկստու. Խորհուրդի ներկայացուցիչ:

Կրնայ պատահիլ, որ յիշեալ ծնողներէն ոմանք մանկութեան Հ.Մ.Ը.Մ.ականներ եղած ըլլան եւ անպայման



փափաքին իրենց փորձառութիւններուն բաժնեկից դարձնել իրենց զուակներն ու թռռները:

Ու կրնայ պատահիլ, որ ծնողներ մնան բախտաւորութենէ մը զրկուած ըլլան, սակայն իրենց զուակներու գործունէութենէն խանդավառուած՝ բարի տրամադրութիւն ունենան իրենց զուակներու կողքին Հ.Մ.Ը.Մ.ի մէջ գործելու, Հ.Մ.Ը.Մ.ի համար գործելու:

Երկու պարագային ալ, սակայն, պատճառն ու հետեւանքը Հ.Մ.Ը.Մ.ի մթնոլորտն է, իւրայատուկ աշխարհն է, որ մագնիսացնող տարօրինակ ուժ մը ունի իր մէջ՝ ծնողները դէպի իրեն քաշելու եւ Հ.Մ.Ը.Մ.ին համար ուրախութեամբ զանոնք աշխատանքի մղելու:

Այս երեւոյթը Ծրագիր-Կանոնագիրով կարելի չէ բացատրել, ո՛չ ալ ազգային-հայրենասիրական համոզումներով կարելի է մեկնաբանել: Այդ բոլորը իրենց տեղը ունին, անկասկած, բայց այս երեւոյթը ապրուած իրականութիւն է, 100 տարուան մթնոլորտի մը, աշխա-

տանքի մը արդիւնքն է, որուն յաջողութեան մէջ անուրանալի դեր ունին ծնողները, որոնք հակառակ այսօրւան կեանքի բազմաթիւ կրապոյրներուն, հակառակ նաեւ քաղքեմիութեան եւ այլասերման տեսակ-տեսակ փորձութիւններուն, մտքի ու խղճի ամենայն հանգստութեամբ իրենց սրտահատորները կը վստահին Հ.Մ.Ը.Մ.ին: Ու վստահելէ ետք, ամէն ձեւով կը հետեւին ու կ'աջակցին Հ.Մ.Ը.Մ.ի մէջ անոնց աճման եւ զարգացման ընթացքին, իբրեւ զբաւական՝ վաղուան հայտութեան առողջ սերունդներու կերտման:

Ի վերջոյ, իրաւ հայ ըլլալու համար չի բաւեր հայու զուակ ըլլալ, պէտք է հայ զուակներու ծնողք ըլլալ: Ժառանգութիւնը առանձինն չի բաւեր: Փոխանցումն է կարեւոր:

Հ.Մ.Ը.Մ.ի իւրայատուկ աշխարհը մնան փոխանցումի մը համար յարմարագոյն միջավայրը եղած է անցեալին, ու կը մնայ նաեւ այսօր եւ վաղը:

Հ.Մ.Ը.Մ.Ի 24 ՇՐՋԱՆՆԵՐ, 108 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱՒՈՐՆԵՐ

Հայաստան: Երեւան, Մալաթիա, Ջէյթուն, Կոմիտաս, Էրեբունի, Արովեան, Չարենցաւան, Հրազդան, Արմատիր, Էջմիածին, Մարտունի, Կիւմրի, Վերի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրոս, Չաիլէ, Թրիպոլի, Պուրճ Համուր, Այնճար, Ծիւնի, Անթիպիաս, Ժըբէյլ, Պատշիէ, Ռատուրա. **Սուրիա:** Հալէպ, Գամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Բեսայ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղէքսանդրիա. **Իրաք:** Պաղրապ, Մուսուլ. **Բուլղարիա:** Բուլղար. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գորինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմեյո, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Սոդերթելիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովկիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանատի:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Բէնպրիճ, Մէրի Գաթրինգ, Լաւալ, Վանքուվըր. **Արենուրեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելէս, Սան Խրանսիսթօ, Յրեզնօ, Մոնթեպելլօ, Փասարինա, Կլէմպէյ, Օրէնճ Բաունթի, Սան Ֆրանցիսկօ, Սան Տիէյօ, Ինըլըր Էմիլայր, Սանթա Գլարա, Բրեւէնթա Հոլիպ, Պըրպէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնամ Բրիք, Նորթ Հոլիվուդ, Սաքրամենթօ, Սանթա Էլարիթա. **Արենուրեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճըրզի, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքոնոս, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալլընի, Շարլոթ, Մերիլենք Հոլիպ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնտո Արլես, Գորրոպա, Մոնթեվիդէօ. **Աւստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արարք»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարար»), Սելպուռն.

«ՆԱՀԱՏԱԿ ՅԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ»ՈՒ ԿԱՄԱԲՈՐ ԲԱՆԱԿԸ

Խաչիկ Շահինեան
ՀԱԼԷՊ

Հանդիսաւոր օրերու պատշաճ արտայայտութիւններ չեն միայն ՀՄԼՄ-ի ուխտն ու երդումը, այլ՝ անհատական թէ՛ հաւաքական կեանքի մնալուն ուղեգիծ:

Հայութեան ծառայելու ի խնդիր հայ ժողովուրդի ծոցէն ծնունդ առած մարմնակրթական այս պանծալի կազմակերպութիւնը՝ ՀՄԼՄ-ը կը շնչէ ու կը գործէ նոյն այդ ժողովուրդին հետ պայքարի դրօշը բարձր բռնած՝ անոր կողքին:

ՀՄԼՄ-ականը միշտ պատրաստ է ծառայելու իր ազգին եւ հայրենիքին, տեւաբար կը մնայ հաւատարիմ Աստուծոյ եւ իր նուիրական նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին:

Ինչքան ալ դժուար յաղթահարելի ըլլան իր շուրջ ստեղծուած անբարենպաստ կացութիւնները, որքան ալ բիրտ ու կործանարար ըլլան ամպրոպագոռ փոթորիկները, ՀՄԼՄ-ականը բնաւ չ'ընկրկիր, չի նահանջեր, չի տկարանար:

ՀՄԼՄ-ը հզօր է ու անսասան, խորունկ, պինդ ու ծաւալուն են անոր արմատները: Ան կենսունակ է ու աւշաուստ, կ'աճի ու կ'ուռճանայ անընդհատ եւ ամէնուրեք՝ աշխարհի չորս ծագերուն:

Եղբայրասիրութիւնը եւ ընկերասիրութիւնը, իբրեւ ասպետական ոգիի ազնուագոյն ցուցանիչ, իր ճշմարիտ նուիրագործումը կը գտնէ յանձնառու եւ օրինակելի դեկավարութեան շունչով թրծուած ՀՄԼՄ-ի կուռ եւ կարգապահ շարքերուն մէջ: Արի-արենոյճներ եւ մարդիկ-մարդիկուհիներ ամենայն նախանձախնդրութեամբ կը մրցին կարծես, այս առաքինի կալուածէն ներս գերազանցութիւն արձանագրելու վեհանձն հետամտութեամբ:

Արդարեւ, ՀՄԼՄ-ի ղեկավարութիւնը Ծրագիր-Կանոնագիրի ճամբով գաղափարական շարժում հունաւորեց, բարոյական հեղինակութիւն ծաւալեց, ու մանաւանդ՝

բժախնդիր, պարկեշտ եւ ինքնամոռ գործելու ոճի թէ՛ տիպար կենսակերպի անձնական օրինակով անօրինակ թափ, մղում ու որակ հաղորդեց

աշխարհատարած այս հիասքանչ կազմակերպութեան բազմաշերտ եւ բազմաբեղուն աշխատանքներուն:

Աւելին, ձեռներէջ ղեկավարութեան եւ կանոնապահ շարքերու առօրեայ անընդմէջ շփումներէն եւ հետեւողական արդիւնարար գործակցութենէն գոյաւորուած ՀՄԼՄ-ականի անկեղծ, եղբայրական ու ասպետական բիւրեղ ոգին հանդիսացաւ անքակտելի շաղախը նորընծայ մանուկ-պատանիին, երիտասարդին, հասուն մարդուն եւ ալեւոր երէցին միջեւ, այն ոգին՝ որ բազմահազար համակիրներու նեցուկը վայելող այս հզօր կազմակերպութեան վարկն ու կառոյցը անխորտակ պահեց, անոր ներկուտակ ուժն ու ճառագայթող հմայքը բազմապատկեց:

Հակառակ հիմնադիր փաղանգի ճառագայթող դէմքերու յաւելած անհատական նկատառելի կշիռին՝ այս պանծալի միութեան կազմաւորման նժարին մէջ, այսուհանդերձ, ՀՄԼՄ-ի խոնարհելի վաստակը՝ հաւաքական հատուցի եւ ճիգի անձնուրաց եւ անշահախնդիր ղեկավարութեան ու կարգապահ հաւատաւոր շարքերու միջեւ համերաշխ եւ ներդաշնակ գործունէութեան մը սքանչելի հանրագումարը կը ներկայացնէ գերազանցապէս:

Սովորաբար, նշանաբանի մը կողքին, միութիւններ, կազմակերպութիւններ, վարդապետութիւններ... անհրաժեշտ կարիքը ունեցած են խորհրդանշական ու փայլատակող դէմքի մը կամ դէմքերու, իբրեւ հովանի ու ջահ՝ ինքնութիւն մը սահմանելու, բնութագիր մը տալու սեփական շարքերուն ու համակիր հասարակութեան:

Պատահական չէ, որ ՀՄԼՄ-ի գաղափարի սերմնացան Ծաւարչ Քրիսեանի հետ սերտօրէն համագործակցած





են մարմնամշակ Գրիգոր Յակոբեանը եւ մտքի ու հոգիի ճարտարապետ Յովհաննէս Հինդլեանը, համալրելով հիմնադիր երրորդութեան հսկաներու լուսապսակ պատուանդանը, միաժամանակ գործնապէս ապացուցելով, որ մարմին, միտք եւ հոգի համահաւասար արժէքներ կը ներկայացնեն մարմնակրթական այս մեծ միութեան համար:

Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրները եւ անոնց շառաւիղ առաջնորդները, հակառակ իրենց ստանձնած բարձրաստիճան պաշտօններուն, ունեցած ղեկավար դիրքերուն, մասնագիտական գերազանց կարելիութիւններուն եւ արտասովոր օժտուածութեան, եղած են համեստ, խոնարհ եւ բարեհամբոյր նկարագիրի տէր անձնաւորութիւններ, ազնիւ ու արժանապատիւ հայեր: Անոնց պարկեշտութիւնը ձեռնհասութիւնն ու անշահախնդրութիւնը եղած է անմրցելիօրէն օրինակելի, վարակիչ եւ հպարտառիթ:

Անոնք սեփական ողջ կարողականութեամբ ներքաշած են Հ.Մ.Ը.Մ-ի բուրային մէջ՝ հեռահար տեսլական դաւանելով հայ երիտասարդութիւնը դաստիարակելու, հասակ առնող հայ նորահաս սերունդին ծառայելու, եւ ուստի՝ ազգի ու հայրենիքի լուսաւոր ապագան կերտելու վսեմագոյն նպատակը, միշտ հեռու՝ փառասիրութենէ, իշխանատենչութենէ, դիրքապաշտութենէ կամ նեղանձնական շահախնդրութենէ... եւ այդ բոլորը՝ իրենց իմացական եւ ֆիզիքական ուժերուն, հոգեմտաւոր ու բարոյական պատկառելի ներգործմին առընթեր՝ յաճախ սեփական վտիտ քսակին բովանդակութիւնը եւս պարպելով այնտեղ:

Անոնց համար առաջնահերթ կարեւորութիւն գգեցած է արդիւնաւոր գործը եւ ոչ թէ դիրքը կամ պաշտօնը: Իրենց

կենցաղային եւ աշխատանքային ուղեգիծին գլխաւոր յատկանիշները կազմած են ուղղամտութիւնը, անկողմնակալութիւնը, արդար եւ կառուցողական քննադատութիւնը ու յատկապէս՝ ինքնաքննադատութիւնը: Թէեւ առհասարակ խուսափած են իրենց խօսակիցը կամ գործակիցը նսեմացնելու, վարկաբեկելու փորձութենէն, սակայն անխնայ եւ անբարեացակամ գտնուած են անթոյլատրելի մեղքերու եւ թերացումներու նկատմամբ: Վճռակամ դեղատոմսերու հաշուոյն չեն սակարկած, բառերը չեն ծամծամած՝ ով այ եղած է մեղանչողը կամ նշաւակը:

Համամիութենական եւ համահայկական աշխատանքներու թէ կարգաւորումներու հարթութեան վրայ, իբրեւ խելամիտ առաջնորդներ անոնք տնօրինած ու գործած են ամենայն ողջախոհութեամբ եւ բարեխղճութեամբ, յարատեւօրէն արհամարհելով հատուածական ճղճիմ աժան եւ նեղմիտ հաշուարկները: Բնականաբար, Հ.Մ.Ը.Մ-ը պիտի հանդիսանար իրենց գործունէութեան առանցքային դաշտը, այնուամենայնիւ, անոնք համընդհանուր հետաքրքրութիւն եւ խանդաղատանք պիտի ցուցաբերէին նաեւ այլ միութիւններու եւ մանաւանդ՝ հայ երիտասարդութեան հանդէպ: Հ.Մ.Ը.Մ-ի «Համահայկական ողիմպիականները», հայկական բոլոր միութիւններուն յղուած մասնակցութեան հրաւերները, ինչպէս եւ բոլորին հետ հաստատուած սերտ կապերը լաւագոյն փաստարկներն են այս առողջ վարքագիծին:

Հասարակական կեանքի կազմաւորման եւ յարատեւման մէջ գաղթաշխարհի մեր կառույցներէն իւրաքանչիւրը ունեցած է, ունի եւ պիտի ունենայ իր կենսական անշրջան-

ցելի դերակատարութիւնը: Եթէ այդ կառույցներէն մէկը հայու հոգին կը լիացնէ, միւսը՝ սիրտն ու խիղճը կ'ազնուացնէ, երրորդ մը՝ կամքն ու բազուկը կը ջրդեղէ, եւ դեռ մէկ ուրիշը՝ հաւատքն ու յոյսը կ'ամրակայէ, ապա Հ.Մ.Ը.Մ.ը այս բոլորին զուգահեռ՝ հայազգի մեր գաւակներուն կը պարգեւէ նաեւ առողջ ու տոկուն մարմինը, խաղի հրճուանքն ու իրաւ ընկերասիրութիւնը, կարգապահութիւնն ու յաղթանակի հմայքը... Ահա թէ ո՛ւր պէտք է փնտռել այդ վեհապանծ կազմակերպութեան մեր ընտրելագոյն երիտասարդները արտակարգօրէն ներգրաւելու, անոնց համընդհանուր համակրանքը վայելելու, գանոնք իր մականին տակ համախմբելու եւ իր մարդակերտ ու ազգանուէր գործունէութեամբ խելայելօրէն ոգեւորելու մոգական ուժն ու անբացատրելի գաղտնիքը:



Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած ոգեկոչական նախաձեռնութիւնները անկրկնելի առիթներ կը հանդիսանան մարմնակրթական այդ ուսուցիչայ կազմակերպութեան մէկդարեայ պատմութեան անվերադարձ, բայց յարատեւօրէն ապրող էջերը թերթատելու, իրատեսութեամբ եւ յստակատեսութեամբ այդ պատմութեան ոսկեմատեանէն ուսանելի դասեր քաղելու, ապա վերանորոգ ուխտով հաստատաքայլ շարունակելու դէպի նոր հորիզոններ բացուող անոր յաւերժական երթը՝ նոյն հաւատքով, միեւնոյն անընկճելի վճռակամութեամբ եւ լիարժէք նուիրումով:

Միութեան հիմնադիրները առաջադրուած նպատակներու կենսագործման ի խնդիր՝ Հ.Մ.Ը.Մ.ական շարքերուն եւ համակիրներուն ներշնչեցին անսակարկ եւ անմնացորդ ծառայութեան ոգի, բոլոր զոհողութիւններու առանցքը համարելով հոգեկան բաւարարութիւնը:

Այսօր, աւելի քան երբեք, Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներէ կ'ակնկալուի առաւել կամք, առաւել աշխատանք, առաւել ստեղծագործութիւն եւ առաւել նուիրում, արժանապատիւ կերպով դիմազրաւելու եւ յաղթահարելու համար միութեան դէմ ցցուող բոլոր դժուարութիւններն ու մարտահրաւէրները:

Մարդկային կեանքը կ'իմաստաւորուի եւ կ'արժեւորուի երբ կը ծառայէ վեհապանծ ու նուիրական հեռանկարներու:

Հ.Մ.Ը.Մ.ի ուժը կը կայանայ մեր ժողովուրդի բոլոր խաւերը, տարբեր դասակարգերն ու հոսանքները մերձեցընելու եւ համախմբելու կարողութեան մէջ: Այդ ժողովրդանուէր միութեան հրաշալի ոգին, հզօր հաւատքը, անկոտորում կամքն ու պայծառ տեսլականը կը կազմեն անոր ճշմարիտ ինքնութիւնն ու եզակի առանձնայատկութիւնը:

Իր գործը փառաւորելու համար լորձնաշուրթն գնահատականներու, բարձրաթուիչ ներբողներու եւ փողփողուն վերադիրներու կարիքը չունի Հ.Մ.Ը.Մ.ը, որուն անցեալին մասին անհերքելի ապացոյցը անոր կենդանի գործն է: Անոր մերօրեայ կազմակերպ գոյութիւնը եւ տիրական ներկայութիւնը, լուռ՝ բայց պերճախօս վկայութիւններն են իր ճառագայթող երէկի մասին:

Մարդկային նուիրական ըսկզբունքներու եւ ազգային գերագոյն իտէալներու երկրպագու հայ մանուկ-պատանիներու եւ երիտասարդներու այս հրաթեւ կազմակերպութիւնը միշտ ծրագրեց ու կազմակերպեց, գործեց ու արդիւնաւորեց, նորոգեց ու վերանորոգեց արժանաւորապէս:

Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ հետեւողականօրէն բարձրացող ու բարձրացնող ներկայութիւն մը հայ կեանքին մէջ: Եղաւ բոլորէն վեր՝ բայց միշտ ծառայեց բոլորին:

«Սովորական միութիւն մը չեղաւ ան, այլ՝ իր հայակերտիչ ու մարդակերտիչ ծրագրերով դարձաւ անզուգական դպրոց»:

«Իր վսեմագոյն սկզբունքներով եւ ազնուագոյն իտէալներով ժողովրդանուէր առաքելութիւն, հրաշագօր դարբնոց»:

«Եւս առաւել՝ իր բարձր դրօշով, իր յաւերժախօս պատգամով եւ իր իւրայատուկ միջոցառումով՝ հարազատ հայրենիք»:

Այլասերող ու գունաթափող հայ գաղթաշխարհին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ը ուր որ ալ յայտնուեցաւ, ինչ երկնակամարի տակ ալ գործեց, մնաց միշտ հաւատարիմ իր արմատներուն, իր ակունքներուն եւ իր ձգտումներուն:

Վերջապէս, ազնուազարմ մեր ժողովուրդին համար Հ.Մ.Ը.Մ.ը դարձաւ «կամաւոր բանակ»ը այն հայ արիւններուն եւ արեւոյշներուն, նաեւ այն հայ մարդիկներուն եւ մարգիկուհիներուն, որոնք կը ծառայեն հաւաքական նոյն ուխտով ու նոյն դրօշին տակ, յանուն նոյն սրբազան նպատակին՝ «միշտ պատրա՛ստ» իրենց ամենաթանկը նուիրաբերելու հայութեան անկատար տենչերու եւ երազներու վախճանական նպատակներու ու տեսլականներու կենսագործման ի խնդիր:

Փա՛ռք, պատի՛ւ եւ բիւր յարգանք մեր ազգային իտէալներու հաւատարիմ պահակին, մեր բարոյական յաղթանակներու անհաւասարելի ախոյեանին, բոլորին պաշտելի անզուգական Հ.Մ.Ը.Մ.ին, մեր «Նահատակ ցեղի անմահներ»ու կամաւոր եւ մի՛շտ յառաջապահ բանակին:

ՃԱՆՉՆԱՆՔ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 43-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀԸ.

ԵՂԲ. ՀԱՄԼԷԹ ՉՐԱԽՉԵԱՆ՝ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ ՇԱՂԿԱՊՈՒԱԾ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու այս տարուան՝ 43-րդ Նաւասարդեան մարզախաղերուն եւ փառատօնին պատուոյ նախագահութիւնը ստանձնեց երկարամեայ միութենական եղբ. Համլէթ Չրախչեան, որուն հետ ծանօթացման հանդիպում մը ունեցանք Փասատինայի իր գրասենեակին մէջ:



խումբը»: Սակայն, նորակազմ այս սկաուտական շարժումը չկրեց Հ.Մ.Ը.Մ. անունը, որովհետեւ երկրի պետական իշխանութիւնները, իմանալով, որ կազմակերպութեան ղեկավարութիւնը Պարսկաստանէն դուրս է, ընդդիմացան անունումին: «Հետեւաբար, նորակազմ ըսկաուտական շարժումը հանդիսացաւ «Արարատ» կազմակերպութեան մէկ միաւորը», կը շարունակէ ան:

Մօտաւորապէս 60 տարուան վրայ երկարող «Կենսագրութիւն» մըն է, որ եղբ. Համլէթ Չրախչեանը կը կապէ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին հետ, Թեհրանի «Արարատ» մարզամշակութային միութենէն մինչեւ Լոս Անճելըս, իբրեւ վարչութիւններու անդամ, Շրջանային Վարչութեան ատենապետ, Կեդրոնական Վարչութեան անդամ եւ բազմաթիւ Պատգամաւորական Ժողովներու մասնակից:

Մէկ խօսքով, միութենական գործիչ մը, որուն կեանքը սերտօրէն առնչուած եւ միահիւսուած է Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական-կազմակերպչական մեծ ընտանիքին հետ:

Ուրկէ՞ սկսած է այս կեանքը եւ ի՞նչպէս սկսած է: Եղբ. Չրախչեան կը պատասխանէ՝ ըսելով. «1950-ականներին էր, Թեհրանում, երբ «Արարատ» միութեան վարչութեան սենեակում տղերքով հաւաքուած էինք մի օր, յանկարծ Հ. Յ.Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեան պատից կախուած նկարը ցած ընկաւ ու նրա ետեւում մենք տեսանք մի ուրիշ նկար, ուր առաջնորդ Ներսէս Արք. Մելիք Թանգեանն էր, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտների հետ, Թաւրիզում: Մեր երիտասարդական խմբակի ղեկավար Լէոնիտ Օհանեանն ասաց, որ մենք էլ կազմակերպենք նման տիպի սկաուտութիւն»: Կապ հաստատուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի համապատասխան մարմիններուն հետ, անոնք ալ իրենց համաձայնութիւնը յայտնեցին, «ու հիմը դրինք սկաուտութեան, երկու խմբով, կարմիր եւ կապոյտ անուանումներով, ապա աւելացան նարնջագոյն խումբը եւ արեւոյշների

շարքերէ ներս գործելէ ետք, Համլէթ Չրախչեան գործած է նաեւ մարզական ծիրէն ներս, իբրեւ վկայեալ լեռնազրնաց եւ չմշկող՝ դասատուի արտօնագիրով:

Այդ տարիներուն, Համլէթ Չրախչեան նաեւ ստանձնած է վարչական պատասխանատուութիւններ «Արարատ» միութեան մէջ: Վրայ կը հասնին Իրանի իսլամական յեղափոխութեան օրերը, ու ինք պայմաններու բերումով կը փոխադրուի Միացեալ Նահանգներ, Սան Ֆրանսիսքօ:

Մէկը, որ տարիներով իր ծննդավայր երկրին մէջ գործած է հայկական հանրային միջավայրէ ներս, չէր կրնար մէկդի քաշուած կեանք մը վարել Միացեալ Նահանգներու մէջ: Օր մը, երբ այցելութեամբ կը գտնուէր Լոս Անճելըս, իրեն կը մօտենայ ուրիշ նուիրեալ մը՝ Ռուբիկ Գիւրջեան եւ իրեն կ'առաջարկէ աշխատանքի լծուիլ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Երկու տղաները՝ Փաթրիքը եւ Փիէրը արդէն իսկ մաս կը կազմէին Հ.Մ.Ը.Մ.ի Կլենտէյլի մասնաճիւղին:

Ու կը սկսի Համլէթ Չրախչեանի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան երկրորդ՝ ամերիկեան փուլը: «Ռուբիկ Գիւրջեանին պատասխանեցի՝ լաւ, ուրեմն պէտք է Լոս Անճելըս փոխադրուեմ: Փոխադրուեցի Լոս Անճելըս ու ինչքան յիշում եմ, 1982-ին կամ 1983-ին, շուտով մաս կազմեցի Կլենտէյլի մասնաճիւղի երկրորդ վարչութեան: Այստեղից սկսուեց իմ գործունէութիւնը Մ. Նահանգներում: Ղարաղաղցիները (Ղարաղաղը Պարսկաստանի հիւսիսը շրջան մըն է, ուր



Համախուժմբ հաշուեթիւն ապրած է- Մ.) օգնութեամբ յաջողեցինք մի կենտրոն գնել Պրոտուէյ փողոցի վրայ: Հոն գործեցինք մի քանի տարի: Հարցեր ունեցանք «Արարատ» թէ Հ.Մ.Լ.Մ. անուանումներու մասին ու ես դիմեցի Շրջանային Վարչութեան (այն ատեն եղբ. Ս. Արեւեանն էր ատենապետը): Մեզի թելադրուեցաւ հայկական անուններ դնել մասնաճիւղերուն, որպէսզի այդ անունով ճանչցուին ու ո՛չ թէ մասնաճիւղի քաղաքի- օրինակ՝ չասենք Վելիի մասնաճիւղ այլ՝ «Մասիս» մասնաճիւղ, «Շանթ» մասնաճիւղ, եւ այլն: Մենք էլ խորհրդակցելով միմիանց հետ, որոշեցինք մեր մասնաճիւղը կոչել Հ.Մ.Լ.Մ-ի Կլենտէյի «Արարատ» մասնաճիւղ, ու սա, ինչքան յիշում եմ, 1984-ին էր», կը պատմէ եղբ. Համլէթ Չրախչեան: Ու այսպիսով, թէ՛ մասնաճիւղի անդամներուն համար հոգեհարազատ էր անունը եւ թէ՛ ալ՝ մասնաճիւղը մէկ անդամն էր Հ.Մ.Լ.Մ-ի մեծ ընտանիքին, կը շարունակէ ան:

Եղբ. Համլէթ Չրախչեանի աշխատանքները չեն սահմանափակուիր «Արարատ» մասնաճիւղով: Շուտով, ան կ'ընտրուի Հ.Մ.Լ.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ: Ան կ'ըսէ. «Թուականների մասին ճիշդ չեմ կարող տեղեկութիւն տալ, սակայն ասեմ, որ մինչեւ 1985-1986 «Արարատ» մասնաճիւղում գործելէ ետք, եղբայր Արեւեանը ինձ առաջարկեց, որ մաս կազմեմ Շրջանային Վարչութեան: Յաջորդ ներկայացուցչական ժողովին ես ընտրուեցի Շրջանային Վարչութեան անդամ ու իբրեւ ատենապետ՝ հոն գործեցի չորս տարի, երկու շրջան: Այս տարիներին, սերտօրէն գործակցել ենք Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ժիրայր Պոյաճեանի (այժմ հանգուցեալ) ու տղթ. Արեւեանի հետ: Ասեմ, որ մեր աշխատանքների մէջ, ես միշտ պարտական եմ եղել այս երկու եղբայրներին, ինչպէս նաեւ այս տարուան «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական» եղբ. Գօգօ Պալեանին: Նրանք էին իմ «մենթորները» Հ.Մ.Լ.Մ-ում:

Եղբ. Ժիրայր Պոյաճեանի մահէն ետք, եղբ. Համլէթ Չրախչեանի հետ կը կապուի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան ու իրեն կ'առաջարկէ մաս կազմել յառաջիկայ Կեդրոնական Վարչութեան: Ան կ'ըսէ. «Շրջանային Վարչութիւնում երկու շրջան գործելուց յետոյ, ես մաս կազմեցի Կեդրոնական Վարչութեան, փոխարինելով հանգուցեալ եղբ. Ժիրայր Պոյաճեանին»:

Այսպէս, եղբ. Համլէթ Չրախչեան աւելի քան կէս դար գործած է Հ.Մ.Լ.Մ-ի մէջ, նուիրաբերելով, ներդրելով շատ բան, իբրեւ մէկ անդամը այս կազմակերպութեան «կամաւոր բանակ»ին:

Հետաքրքրական էր գիտնալը, թէ ինք ի՞նչ ստացած-ստրված է Հ.Մ.Լ.Մ-էն: Եղբ. Չրախչեան լայն ժպիտով մը անվարան կը պատասխանէ. «Լաւ հարցում է... Եթէ լուրջ մօտենանք այս հարցին, մեր տուածը Հ.Մ.Լ.Մ-ին շատ չնչին մի բան է. իրականում, Հ.Մ.Լ.Մ-ը ոչ միայն ինձ, այլեւ՝ բազմաթիւ երիտասարդ սերունդների (յինի դա Պարսկաստանում թէ ուրիշ երկրներում) տուել է ազգային դաստիարակութիւն եւ պատճառ դարձած է որ նրանց 80-85 տոկոսը յաջողեն կեանքում: Իմ ամբողջ յաջողութիւնը ես պարտական եմ Հ.Յ.Դասակցութեան, Թեհրանի «Արարատ»ին եւ Հ.Մ.Լ.Մ-ին: Դաստիարակութիւնը, որ մենք ստանում ենք այս կազմակերպութիւններում, ոչ մի ուրիշ տեղ չկայ: Նայէք այստեղի Հ.Մ.Լ.Մ.ականներին, բոլորն էլ յաջողուած անձեր են, շնորհիւ այդ նոյն ազգային առողջ դաստիարակութեան: Ուրեմն, մենք պարտական ենք մեր կազմակերպութեան: Սրանից աւելի լաւ չեմ կարողանում բացատրել...»:

Առաւել քան կէս դարու գործունէութիւնը անպայման որ ապագային կապակցութեամբ եւս պատկերացում մը պէտք է ստեղծէ: Այս մասին մեր հարցումին, թէ եղբ. Չրախչեան ի՞նչպէս կը տեսնէ Հ.Մ.Լ.Մ-ի ապագան՝ ան պատասխանեց. «Եթէ նկատի ունենանք մեր վերջին 40 տարուան աշխատանքները, եթէ աչքի առջեւ ունենանք այդ տասնամեակների մեր ղեկավարութիւնը, պիտի տեսնենք, որ անոնք եկած էին Միջին Արեւելքի երկիրներէն (Լիբանան, Պարսկաստան, Սուրիա եւ այլն) եւ տարիքով չափահաս անձեր էին. հիմա տեսնում ենք, որ այսօրուան մեր գրեթէ բոլոր վարչականները համալսարանական, ուսեալ երիտասարդներ են: Չեմ ուզում ասել, որ նախկինում ուսեալ չէին, բայց նախկինում Մ. Նահանգներ էին գալիս Իրանից՝ այնտեղի մտածելակերպով, Լիբանանից՝ այնտեղի մտայնութեամբ, հայկացին՝ Հայկալի մտածելակերպով: Համարեա՞ մի խառն «ապուր» էր ստեղծուում եւ հարցեր ունէինք երիտասարդութեան հետ, որովհետեւ

երիտասարդների մօտեցումները ամբողջութեամբ ուրիշ էին: Հիմա տեսնում ենք, որ մեր վարչականները, ջախջախիչ մեծամասնութեամբ, կամ էստեղ ծնուած, կամ էլ շատ փոքր տարիքից հոս եկած երիտասարդներ են, էստեղ մեծացած եւ ուսում առած, զարգացած տղերք ու աղջիկներ են: Հետեւաբար, ես կարծում եմ, որ մեր ապագան շատ փայլուն է լինելու: Տեսէք, չկայ ուրիշ հայկական նման կազմակերպութիւն, որ ունի մեր կարողութիւնը եւ համահայկական կառույցը, որ ունի մեր մարդուժը: Ու ամենակարեւորը, մեր բոլոր վարչականները, անդամները, կամաւոր կարգով, յօժար կամքով են գործում: Փաստն էլ այն է, որ Նաւասարդեանների ամբողջ աշխատողները կամաւոր անդամներ ու համակիրներ են: Էնպէս որ, ես հաւատացած

եմ, որ շատ փայլուն է լինելու Հ.Մ.Ը.Մ.ի ապագան: Յոյսով եմ, որ մեր երկրորդ հարիւրամեակը նոյնպէս յաջողութիւններով լի է լինելու»:

Աւարտին, ան կոչ ուղղեց համայնքի բոլոր ընտանիքներուն, մանաւանդ երիտասարդ ծնողներուն, որպէսզի իրենց գաւակները վստահին Հ.Մ.Ը.Մ.ին, քաջալերեն իրենց գաւակները, որպէսզի անդամակցին այս միութեան, «մանաւանդ որ մեր միութիւնը երիտասարդ է ու երիտասարդութիւնն է, որ պիտի դեկավարի, աշխատանքի ծանր բեռը վերցնի իր վրայ Մ. Նահանգներու մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը նաեւ հայապահպանումն է, հայ լեզուի, մշակույթի պահպանումը, ու սա սկսուած է սկսուտութիւնից: Սա իմ փափաքն է»:

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԻ
2018-ի «ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ» ԵՂԲ. ԳՕԳՕ ՊԱԼԵԱՆԻ ՀԵՏ**

**ԱՄԲՈՂՁ ԿԵԱՆՔ ՄԸ
Հ.Մ.Ը.Մ.ԻՆ ՄԷՁ,
Հ.Մ.Ը.Մ.ԻՆ ՀԱՄԱՐ**

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը 2018-ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը տիտղոսը շնորհեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Գօգօ Պալեանին: Իսկ ո՞վ է եղբ. Պալեան: Եղբ. Գօգօ Պալեանի կեանքը սերտօրէն կապուած է Հ.Մ.Ը.Մ.ին: Ան այս մեծ կազմակերպութեան կը ծառայէ մօտաւորապէս 60 տարիէ ի վեր: Իր բացատրութեամբ, իր կեանքը ընթացած է երեք ուղղութեամբ՝ տուն, դպրոց եւ ակումբ, այսինքն՝ Հ.Մ.Ը.Մ.:

Ան կը վկայէ, թէ իրեն համար մեծ քաջողականութիւն մը ունի Հ.Մ.Ը.Մ.ը, որովհետեւ այս կազմակերպութիւնը իրեն տուած է հայու ինքնութիւն եւ ինքնավստահութիւն: Այս կազմակերպութիւնը իրեն սորվեցուցած է ծառայել ժողովուրդին ու հայրենիքին:

Գարձեալ իր վկայութեամբ, ինչ որ ինք սորված է Հ.Մ.Ը.Մ.էն, վերադարձուցած է ժողովուրդին՝ Հ.Մ.Ը.Մ.ին ծառայելու ընդմէջէն:

Արդարեւ, եղբ. Պալեան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պոսթրնի նորակազմ մասնաճիւղի վարչութեան, ապա՝ Լոս Անճելըսի մէջ դարձած է մասնաճիւղի վարչական, Շրջանային Վարչութեան յանձնախումբերու անդամ, Նաւասարդեանի յանձնախումբի ատենապետ, Շրջանային Վար-

չութեան անդամ ու ապա՝ ատենապետ, մասնակցած է միութեան Պատգամաւորական Ժողովներուն, եղած է Կեդրոնական Վարչութեան անդամ, մէկ շրջան՝ իբրեւ փոխ ատենապետ: Հետեւաբար, կր խօսինք ամբողջ կեանք մը Հ.Մ.Ը.Մ.ի յարկին տակ անցուցած ու այս կազմակերպութեան ծառայած անձնաւորութեան մը հետ:

Եղբ. Գօգօ Պալեանի հետ մեր զրոյցը սկսաւ իր տան կանաչազարդ բակին մէջ, դաւաթ մը սուրճով՝ Հայաստանի վերջին դէպքերուն մասին միտքերու կարճ փոխանակումներէ ետք:

Առաջին հարցումին, թէ ի՞նչ տուած է Հ.Մ.Ը.Մ.ը եղբ. Գօգօ Պալեանին՝ ան պատասխանեց. «10 տարեկանիս արդէն սկսուտ էի, Պէյրութի Էլշէֆիէ թաղամասի «Ազատամարտ» ակումբին մէջ:

Այդ օրերէն արդէն, Հ.Մ.Ը.Մ.ը ինծի համար ունէր քաջողական ուժ մը, որ ինծի ընկերացաւ սկսուտական ամբողջ կեանքիս ընթացքին: Այդ օրերու իմ սկսուտ ընկերներէս կը յիշեմ եղբայրներ Յարութիւն Չէքիճեանը, Ալիք



Մեջբնեանը, անշուշտ՝ Ժիրայր Սարգիսեանը, որուն հետ հետագային Կեդրոնական Վարչութեան անդամ եղանք: Այդ օրերուն, մեզի համար, տունէն դատ, կար միայն ու միայն ակումբ եւ Հ.Մ.Ը.Մ.:

1962-ին, երբ Պոսթըն եկանք, հոն Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ չկար: Իսկ 1973-ին, երբ հոն եւս մասնաճիւղ հիմնուեցաւ ու ես վարչական աշխատանք ստանձնեցի, կարծես նոր կեանք մը սկսաւ ոչ միայն ինծի համար, այլեւ՝ պոսթընահայ գաղութին համար եւս:

Կեանքի պայմաններու բերումով, եղբ. Գօգօ Պալեան 1976-ին կը փոխադրուի Լոս Անճելըս եւ այդ թուականէն մինչեւ այսօր, իր կեանքը սերտօրէն կապուած է Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին հետ:

Այսպէս, Լոս Անճելըս հաստատուած տարին իսկ ան աշխատած է Շրջանային Վարչութեան յանձնախումբերէն մէկուն մէջ, ապա եղած է Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութեան անդամ: 1982-1986, եղբ. Գօգօ Պալեան ընտրուած է Շրջանային Վարչութեան անդամ, իսկ 1990-1992 տարիներուն, վարած է նոյն Շրջանային Վարչութեան ատենապետի պաշտօնը: Իսկ 1995-2003, երկու յաջորդական շրջան, ան մաս կազմած է Կեդրոնական Վարչութեան, իսկ 2007-2011 քառամեակին, դարձեալ ընտրուած է Կեդրոնական Վարչութեան անդամ՝ իբրեւ փոխ ատենապետ:

Եղբ. Գօգօ Պալեան 6 անգամ մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական Ժողովներու: «Հետեւաբար, ես Հ.Մ.Ը.Մ-ի արդիւնքն եմ: Արդիւնքն եմ այն կազմակերպութեան, որ մեզ պահեց, մեծցուց ու դաստիարակեց իբրեւ հայ: Մէկ խօսքով, Հ.Մ.Ը.Մ-ը Սփիւռքի մէջ, ինծի նման տասնեակ հազարաւորներու տուած է հայու ինքնութիւն, ճիշդ մեծ ընտանիքի մը նման: Ես մարզիկ կամ մարզիչ չեմ եղած, այլ՝ աշխատած եմ միութեան վարչական համակարգէն ներս: Տարբեր խօսքով՝ անդրադարձած եմ, որ այն ինչը որ Հ.Մ.Ը.Մ-ը տուած է ինծի, պարտքս է աւելիով վերադարձնել ստացածս», կը յայտնէ եղբ. Պալեան:

Հ.Մ.Ը.Մ-ի մէջ եղբ. Գօգօ Պալեանի գործակիցները, բոլորն ալ անխտիր, կը վկայեն, թէ ան ոչ մէկ անգամ զյա-



ցած է իր ներդրումը իր սիրած կազմակերպութեան եւ ոչ մէկ անգամ մերժած է իրեն առաջարկուած որեւէ աշխատանք:

Հայրենիքը դուրս չէ մնացած միութենական աշխատանքներու իր ծիրէն: Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ. Հ.Ա.Ս.Կ-ի կազմաւորման ու արմատաւորման մէջ եղբ. Պալեան եւս ունեցած է իր դերը, իր բազում գործակիցներուն հետ՝ մասնակից դառնալով սկստական շարժումի, կազմակերպչական կառույցի եւ բանակավայրերու ստեղծման:

Մեր զրոյցը չի սահմանափակուիր եղբ. Գօգօ Պալեանի անցեալով, այլ կը տարածուի Հ.Մ.Ը.Մ-ի ապագային մասին իր պատկերացումներով: Ինք նաեւ մաս կազմած էր Կեդրոնական Վարչութեան յառաջացուցած այն յանձնախումբին, որ պիտի մշակէր միութեան ռազմավարութիւնն ու ապագայի տեսլականը, ձեւով մը՝ ճամբու քարտէսը:

Այս մասին եղբ. Գօգօ Պալեան կ'ըսէ. «Հ.Մ.Ը.Մ-ի համար անհրաժեշտ է պատշաճեցումի խնդիրը: Անցեալին կար տուն-դպրոց-ակումբ միջավայրը, սակայն այսօր, յատկապէս Մ. Նահանգներու մէջ, նոր ժամանակները նոր պահանջներ կը դնեն մեր դիմաց: Այսօր, արդի երեխային ու երիտասարդին կեանքին մէջ Հ.Մ.Ը.Մ-ը շատ «մրցակիցներ» ունի, հետեւաբար, այս բոլորը մեր սկզբունքներուն հետ համադրելու հարցը այժմէական է: Մեր մշակած ռազմավարական ծրագրումին մէջ այս բոլորը հաշուի առնուած են: Ի վերջոյ, կեանքի բերումով, Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքի ծիրը ընդարձակումի փուլին մէջն է եւ մեծնալն ալ ունի իր ցաւազին կողմերը:

Բարեբախտաբար, կը շարունակէ ան, շնորհիւ իր նուիրումին, Հ.Մ.Ը.Մ-ը կը վայելէ ժողովրդային գորակցութիւն: Մեր խարխիւր ամուր է, ժողովուրդը մեր թիկունքին կանգնած է եւ ասիկա մեծ առաւելութիւն է Հ.Մ.Ը.Մ-ին համար, որովհետեւ յատկապէս Սփիւռքի մէջ, ժողովուրդը իր ինքնութիւնը նաեւ Հ.Մ.Ը.Մ-ին կը կապէ,



անոր կը վստահի նոր սերունդին հայեցի դաստիարակութեան այն բաժինը, որ կ'ամբողջացնէ տան ու դպրոցին տուածը. այսինքն, սկառուտական շարքերուն ու գործունէութեան, մարզական դաշտերուն եւ միջնորդութիւն, ինչպէս նաեւ՝ վարչական-կառավարման բնագաւառներուն ընդմէջէն: Մանաւանդ որ, Հ.Մ.Ը.Մ.ը կամաւորներով իւրայատուկ «բանակ» մըն է»:

Իր համոզումով, ռազմավարական ծրագրումի աշխատանքը լայնածաւալ ու բազմամակարդակ է. համապարփակ է ու կ'ընդգրկէ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներու բոլոր դաշտերը: «էականը, այս բոլորը մնայուն վարքագիծի եւ աշխատանքի վերածելն է: Մարտահրաւէր մը, որ համոզումով Հ.Մ.Ը.Մ.ը ճիշդ կերպով կը դիմագրաւէ ու կը յաղթահարէ», խանդավառութեամբ կ'ըսէ ան:

Մեծ պատկերին մէջ, երբ մեր աչքերուն դիմաց կը պարզուի եղբ. Գօգօ Պալեանի անցեալի նուիրումը եւ ապագային նկատմամբ իր խանդավառ պատկերացումները, պատահական չեն այն բոլոր գնահատականները, զորս ինք ստացած է Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին իր նուիրումին իրեւ արդիւնք:




Եղբ. Գօգօ Պալեանի համեստութիւնը «վիրաւորելու» գնով պէտք է հաստատել, որ ան 1993-ին արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին, 2002-ին՝ Հայաստանի Ազգային Սկառուտական Կազմակերպութեան ոսկեայ շքանշանին: Նոյն տարին, ան արժանացած է Հայաստանի Հանրապետութեան մշակույթի եւ երիտասարդութեան ու մարմնամարզի նախարարութեան ոսկեայ յուշամետալին, իսկ 2004-ին՝ Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին: Նաեւ, 2014-ին, Սփիւռքի նախարարութիւնը իրեն շնորհած է ոսկեայ շքանշան, միշտ ու միշտ իր կամաւոր նուիրումին եւ ծառայանուէր աշխատանքներուն համար:

Վարձքը կատար նուիրեալ սկառուտ, մասնաճիւղի վարչական, Շրջանային Վարչութեան ու Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գօգօ Պալեանին, որուն սիրտը կը բաբախէ Հ.Մ.Ը.Մ.ով: Անձ մը, որ իր հանրային կեանքին առանցքը դարձուցած է Հ.Մ.Ը.Մ.ը՝ բառացիօրէն: Նուիրումի իր օրինակը վարակիչ պիտի ըլլայ մեր պատանիներուն ու երիտասարդներուն համար, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած բոլոր մասնաճիւղերուն մէջ:

Վարձքը կատար նուիրեալ սկառուտ, մասնաճիւղի վարչական, Շրջանային Վարչութեան ու Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գօգօ Պալեանին, որուն սիրտը կը բաբախէ Հ.Մ.Ը.Մ.ով: Անձ մը, որ իր հանրային կեանքին առանցքը դարձուցած է Հ.Մ.Ը.Մ.ը՝ բառացիօրէն: Նուիրումի իր օրինակը վարակիչ պիտի ըլլայ մեր պատանիներուն ու երիտասարդներուն համար, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած բոլոր մասնաճիւղերուն մէջ:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Գրիգորիս Պողարեան (Լիբանան) 300 \$
- Չարման Տաղլեան (Արժանթին) 100 \$
- Պետիկ Տէր Վարդանեան (Արեւելեան Ս. Ն.) 600 \$



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home,
away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

Studio/IKEN 2005 FRES

www.europehotel.am



ԱՐԱԲԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ԱԽՈՅԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍՒՄ ԵՏՔ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ
ՏՂՈՅ ԽՈՒՄԲԻՆ
100-ԱՄԵԱԿԻ ՏԱՐՈՒԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՏՈՒՊԼԷՆ.
Հ.Մ.Ը.Մ. ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ
ԵՒ ԲԱԺԱԿԱԿԻՐ

15 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ-ի պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբը պատմական աննախընթաց նուաճում մը արձանագրեց, երբ 13 օրուան մէջ հանդիսացաւ Լիբանանի բաժակակիր եւ ախոյեան: Նորագոյն նուաճումը կատարուեցաւ արաբական ակումբներու ախոյեանութեան տիտղոսին տիրանալէ վեց ամիս ետք:

Այսպէս, 2 Նոյեմբեր 2017-ին, Մարոքի մէջ արաբական աշխարհի ակումբներու ախոյեանութեան բաժակը բարձրացնելէ ետք, Հ.Մ.Ը.Մ-ի հօր կազմը 2 եւ 15 Մայիսին, Զուքի «Նուհատ Նուֆալ» եւ Մըզհէրի «Ադբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզահամալիրի «Ատոմ եւ Սեյրա Թնճուկեան» մարզադաշտերուն մէջ բարձրացուց նաեւ Լիբանանի բաժակի եւ ախոյեանութեան բաժակները: Տակաւին, առանց մոռնալու տարեշրջանին սկիզբը, «Հանրի Շալհուպի մրցաշարք»-ին բաժակը, որուն Հ.Մ.Ը.Մ. արժանաւոր կերպով տիրացաւ 1 Հոկտեմբեր 2017-ին:

Բոլոր բաժակները նուիրուեցան Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին եւ մարզական փայլուն էջ մը արձանագրեցին

չրջանի եւ միութեան մարզական ոսկեմատեանին մէջ: Հ.Մ.Ը.Մ. իր պատմութեան մէջ միայն մէկ անգամ տիրացած էր Լիբանանի ախոյեանութեան տիտղոսին, այն ալ... 1950-ին (Այս մասին կարդալ էջ 14): Պատմական նուաճումը տրամաբանական արդիւնքը եղաւ խումբին վերջին հինգ տարուան հետեւողական աշխատանքին եւ աստիճանական յաջողութիւններուն, որոնց մէջ իրենց բաժինը ունեցան խումբին մարզիչները, մարզական պատասխանատուներն ու մարզիկները:

Ամէն ինչ սկսաւ 2013-ին, երբ խումբը Բ. դասակարգէն յաջողեցաւ բարձրանալ Ա. դասակարգ: Յաջորդ տարի, 2014-ին, պոստիացի մարզիչ Ալէն Ապազի հետ (որ երթի մրցումներու աւարտին փոխարինեց սերպ մարզիչ Նենաթ Քըրզիչը) խումբը յաջողեցաւ ախոյեանութեան տարեշրջանը աւարտել վեցերորդ դիրքի վրայ:

2015-ին, խումբը Ճօ Վոկըլի, Մայք Ֆրէյզըրի, Տիոն Տիքսընի, Մարիօ Ապպուտի, Սեւակ Քէթէնճեանի, Մարք Քորքեանի եւ Ճիմի Սալէմի հետ հասաւ Գ. հանգրուանի փլէյ-օֆֆի մրցումներ եւ քառորդ աւարտակա-

նին 3-1 արդիւնքով տեղի տրուաւ Սափէսի դիմաց (1-0, 1-1, 2-1, 3-1):

2016-ին, մարզիչ Փաթրիք Սապայի հետ, խումբը կարեւոր քայլ մը առաւ դէպի ախոյեանութեան տիտղոս, երբ յաջողեցաւ հասնիլ մինչեւ կիսաւարտական եւ տիրացաւ պատուաբեր չորրորդ դիրքին՝ 4-2 արդիւնքով տեղի տալով այդ տարուան ախոյեան Ռիատիի դիմաց (0-1, 1-1, 1-2, 2-2, 3-2, 4-2):

2017-ին, Հ.Մ.Ը.Մ. շրջանցեց նաեւ կիսաւարտանի հանգրուանը եւ հասաւ աւարտական, ուր կրկնուեցաւ նախորդ տարուան սեմարիոն՝ 4-2 պարտութիւնը Ռիատիի դէմ (1-0, 2-0, 2-1, 2-2, 2-3, 2-4): Ի տարբերութիւն նախորդ տարուան, սակայն, խումբը հանդիսացաւ ախոյեանութեան երթի ու դարձի ախոյեան: 18 մրցումի ընթացքին, մարզիչ Ճօ Սուտահէսի տղաքը արձանագրեցին 17 յաղթանակ եւ 1 պարտութիւն: Հ.Մ.Ը.Մ-ի հնգեակը իր դաշտին վրայ անպարտելի մնաց 17 մրցում՝ 9 Դեկտեմբեր 2016-էն 19 Մայիս 2017, երբ աւարտականին տեղի





տուաւ Ռիատիի դէմ՝ 64-73 արդիւնքով:

2018-ն միուլթեան 100-ամեակի տարին էր: Նպատակը յտակ էր, հասնելու միջոցը դժուար, բայց ո՛չ անկարելի: Չորս տարուան մէջ Ա. դասակարգի վերջին դիրքերէն վեցերորդ, չորրորդ եւ երկրորդ դիրքերը հասած խումբ մը յաւելեալ ճիգով մը կրնար նուաճել նաեւ առաջնութիւնը եւ իրականութիւն դարձնել իր բազմազարհար համակիրներուն երազը:

...Եւ երազը իրականութիւն դարձաւ 15 Մայիս 2018-ին, երբ Հ.Մ.Ը.Մ. երեք տարուան «վրէժ»ը լուծեց գլխաւոր մրցակիցէն եւ յաջողեցաւ 4-3 ար-

դիւնքով պարտութեան մատնել զայն՝ նախապատուութիւն ունենալով աւարտականի եօթը խաղերը իր դաշտով սկսելու եւ աւարտելու առաւելութիւնը: Անշուշտ, դիւրին չեղաւ յաղթանակը: Պէտք եղաւ սպասել մինչեւ եօթներորդ եւ վերջին մրցում՝ գիտնալու համար Լիբանանի ախոյեանին ինքնութիւնը:

Եօթներորդ եւ վերջին մրցումին, Հ.Մ.Ը.Մ. եղաւ անխնայ եւ 74-59 արդիւնքով պասքեթպոլի անմոռանալի դաս մը տուաւ Ռիատիի (22-21, 37-30, 55-69, 74-59): Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակին կերտիչները հանդիսացան Սամ Եոնկ (21 կէտ), Ուոյթրը Հոճ (18 կէտ), Մաք-

րամ Պըն Ռամատան (14 կէտ), Իսմայիլ Ահմատ (8 կէտ) եւ խմբակիցներ:

Աւարտականի եօթը մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.- 94-83, 87-65, 76-72, 66-56, 76-65, 90-86 եւ 74-59:

Այս յաղթանակով Հ.Մ.Ը.Մ. եղաւ չորրորդ խումբը, որ Լիբանանի պասքեթպոլի արդի ախոյեանութեան շրջանին՝ 1993-էն ասդին, տիտղոսին կը տիրանայ: Արդարեւ, Ռիատի տիտղոսին տիրացած է 14 անգամ, Սաժէս՝ 8 անգամ, իսկ Շանվիլ՝ մէկ անգամ (2012): Ախոյեանութիւնը կիսատ մնացած է 1996-ին եւ 2013-ին, առանց տիտղոսակիր ունենալու:



Հ.Մ.Ը.Մ. ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԻՆ ԿԸ ՎԵՐԱՏԻՐԱՆԱՅ... 68 ՏԱՐԻ ԵՏՔ

15 Մայիս 2018-ին, երբ Հ.Մ.Ը.Մ.ի Կողմ պասքեպոլի ներկայացուցչական խումբը Լիբանանի ախոյեանության Կիպոլոսին փորագրեց, 68 տարուան երազ մրն է, որ իրականացաւ:

Հ.Մ.Ը.Մ. իր պատմութեան մէջ առաջին, վերջին եւ միակ անգամը Լիբանանի Կողմ ախոյեանութեան փորագրած է... 68 տարի առաջ, ի փարբերութիւն աղջկանց խումբին, որ իբրեւ Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ Կիպոլոսին փորագրած է 1950-1997` բացառութեամբ 1960-1961 տարեշրջանին եւ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս վերջին երեք տարիներուն (2016, 2017, 2018):

Պասքեպոլը ֆուրպոլէն աւելի ուշ մուտք գործած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մարգաշներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին կողմէ ան կիրարկուի սկսած է 1939-ին: Մասնաճիւղին պասքեպոլի դաշտին կառուցումով, պասքեպոլը Հ.Մ.Ը.Մ. ներմուծած են եղբայրներ Նուպար եւ Յովսէփ Խաչատրեաններ, որոնց շուրջ կառարուած է մարգախաղը սիրողներու փոքր խմբակ մը, բաղկացած էր բայրներ Խաչիկ Խաչատրեանէ, Յակոբ Գեղունիէ եւ Վահրամ Պազամճեանէ:

Նոյն տարիներուն, աչքի կը զարնէ ճեմարանականներէ կազմուած պասքեպոլի Կողմ «Կամբ» խումբը, որուն մաս կը կազմէին խոսքմնայից շարք մը մարգիկներ: Այդ խումբին Հ.Մ.Ը.Մ.ին միացումով կը սպեղծուի բաւական զօրաւոր խումբ մը, որ շուրջով կը բախարտորուի հմուտ մարգիչով մը, յանձնին եղբ. Յակոբ Գարեանի, որ նախկին փայլուն մարգիկ մը ըլլալու կողքին, երկար վազքի եւ սուգումի ախոյեան մըն էր:

Եղբ. Գարեանի անվիճելի կարողութեամբ եւ հեպտոնական աշխարհանքով, Կողմ պասքեպոլի խումբը կը դառնայ Լիբանանի լաւագոյնը եւ 1950-ին կը փորանայ երկրի ախոյեանութեան Կիպոլոսին: Ախոյեան խումբին մաս կը կազմեն Վարդգէս Տէր Կարապետեան, Լեւոն Պերպերեան, Վարդգէս Ալախալպոյեան, Գարլոս Էսսի, Ալէն Ապուհայրեան, Վարուժան Ազարեան, Ժան Տիարպէրեան եւ Համբարշում Արապեան:

Եղբ. Գարեանի անվիճելի կարողութեամբ եւ հեպտոնական աշխարհանքով, Կողմ պասքեպոլի խումբը կը դառնայ Լիբանանի լաւագոյնը եւ 1950-ին կը փորանայ երկրի ախոյեանութեան Կիպոլոսին: Ախոյեան խումբին մաս կը կազմեն Վարդգէս Տէր Կարապետեան, Լեւոն Պերպերեան, Վարդգէս Ալախալպոյեան, Գարլոս Էսսի, Ալէն Ապուհայրեան, Վարուժան Ազարեան, Ժան Տիարպէրեան եւ Համբարշում Արապեան:



Կ'արժե նշել նաեւ, որ այս յաղթանակով Հ.Մ.Ը.Մ. վերջ մը կը դնէր ախոյեանութեան աւարտական մրցումներուն Ռիատի 14 տարուան յաղթանակներու շարքին, տրուած ըլլալով որ Ռիատի վերջին անգամ աւարտականներու շարք մը կը կորսնցնէր... 6 Յունիս 2004-ին, Սաժէսի դէմ պարտութեամբ:

Մինչեւ աւարտականներ երթը, սակայն, դիւրին չեղաւ Հ.Մ.Ը.Մ.ի կազմին համար, որ ախոյեանութեան երթի ու դարձի մրցումներուն արձանագրեց 15 յաղթանակ եւ 3 պարտութիւն: Խուճապը երթին իր դաշտին վրայ պարտութիւն մը կրեց Լուէյզիէին (մէկ կէտով՝ 91-92), իսկ դարձին երկու անգամ տեղի տուաւ Շանվիլի (103-100) եւ Ռիատիի դիմաց (87-82): Ֆայնլը 8-ի մրցումներուն ան յաղթեց 6 մրցում եւ պարտուեցաւ 2 մրցում՝ Ռիատիի (86-85) եւ Պէյրուսի դէմ (92-88): Այնուհետեւ, ան սրընթաց ուղղուեցաւ դէպի աւարտական:

Ստորեւ՝ տարեշրջանին ընթացքին խումբին արձանագրած արդիւնքներուն պատկերը:-

ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

- Հ.Մ.Ը.Մ.-Պէյրուսի 89-68
- Սաժէս-Հ.Մ.Ը.Մ. 67-79
- Հ.Մ.Ը.Մ.-Լուէյզի 91-92
- Պիպլոս-Հ.Մ.Ը.Մ. 80-90
- Հ.Մ.Ը.Մ.-Անթունիէ 91-75

- Հ.Մ.Ը.Մ.-Թատամոն 97-83
- Հ.Մ.Ը.Մ.-Շանվիլի 110-77
- Մուլթիթաճէտ-Հ.Մ.Ը.Մ. 74-81
- Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 92-84

- ԴԱՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ**
- Պէյրուսի-Հ.Մ.Ը.Մ. 81-86
- Հ.Մ.Ը.Մ.-Սաժէս 105-97
- Լուէյզի-Հ.Մ.Ը.Մ. 63-89
- Հ.Մ.Ը.Մ.-Պիպլոս 91-68
- Անթունիէ-Հ.Մ.Ը.Մ. 92-108
- Թատամոն-Հ.Մ.Ը.Մ. 94-108



- Շանվիլի-Հ.Մ.Ը.Մ. 103-100
- Հ.Մ.Ը.Մ.-Մուլթիթաճէտ 94-72
- Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 87-82

ՖԱՅՆԸԸ 8-Ի ՄՐՑՈՒՄՆԵՐ

- Հ.Մ.Ը.Մ.-Սաժէս 94-79
- Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 86-85
- Հ.Մ.Ը.Մ.-Պէյրուսի 91-73
- Շանվիլի-Հ.Մ.Ը.Մ. 78-92

- Սաժէս-Հ.Մ.Ը.Մ. 81-83
- Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 98-69
- Պէյրուսի-Հ.Մ.Ը.Մ. 92-88
- Հ.Մ.Ը.Մ.-Շանվիլի 93-78

ՓԼէՅ-ՕՖԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

- Հ.Մ.Ը.Մ.-Լուէյզի 97-77
- Լուէյզի-Հ.Մ.Ը.Մ. 68-94
- Հ.Մ.Ը.Մ.-Լուէյզի 94-83

- ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆ**
- Հ.Մ.Ը.Մ.-Սաժէս 121-79
- Սաժէս-Հ.Մ.Ը.Մ. 68-89
- Հ.Մ.Ը.Մ.-Սաժէս 119-65

ԱԻԱՐՏԱԿԱՆ

- Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 94-83
- Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 87-65
- Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 76-72
- Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 66-56
- Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 76-65
- Ռիատի-Հ.Մ.Ը.Մ. 90-86
- Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի 74-59

Նշենք, որ ախոյեան խումբին մաս կազմեցին հետեւեալ մարզիկները:-

Սամ Եոնկ, Ուոլթըր Հոճ, Մաքրամ Պըն Ռամատան, Իսմայիլ Ահմատ, Հայկ Ինճըրքոչեան, Էլի Շամուն, Քարիմ Ջէյնուն, Քարամ Մըշքէֆ, Սեւակ Քէթէնճեան, Վարանդ Քիլէճեան, Փաուլօ Պէտիկեան եւ Հայկ Խաչերեան:

Հ.Մ.Ը.Մ. ՆԱԵՒ ԲԱԺԱԿԱԿԻՐ

Լիբանանի պասքեթպոլի ախոյեանութեան տիրացումը կը յաջորդէր բաժակի տիտղոսին տիրացման:

2 Մայիս 2018-ին, բաւական բուռն պայքարէ մը ետք, Հ.Մ.Ը.Մ. կը խլէր Լիբանանի պասքեթպոլի բաժակը, երբ կը ճակատէր վերջին տարիներու տիտղոսակիր Ռիատիի դէմ եւ 77-70 արդիւնքով պարտութեան կը մատնէր զայն:

Հ.Մ.Ը.Մ. բաժակի աւարտականին կը հասնէր պարտութեան մատնելէ ետք Հուսիսը եւ Անթունիէն: Շանվիլիի դէմ խումբին մրցումը կը ջնջուէր՝ վերջինին մրցաշարքէն քաշուելու պատճառով:

Աւարտական մրցումի յաղթանակին մէջ իրենց բաժինը կ'ունենային Հայկ Ինճըրքոչեան (9 կէտ), Սամ Եոնկ (25 կէտ), Քարիմ Ջէյնուն (3 կէտ), Էլի Շամուն (6 կէտ), Ուոլթըր Հոճ (14 կէտ), Իսմայիլ Ահմատ (16 կէտ) եւ Մաքրամ Պըն Ռամատան (4 կէտ):





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՓԱՌԱՏՕՆ՝ «ՊԱՏՈՒԱԲԵՐ ԱՆՅԵԱԼԷՆ ՅԱՂԹԱԿԱՆ ԱՊԱԳԱՅ» ԲՆԱԲԱՆՈՎ

Թղթակից
ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ

Բարձր հովանավորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, հովանավորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան, նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանին, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութեան եւ ներկայութեամբ բազմաճապար հայորդիներու, Կիրակի, 3 Յունիս 2018-ին, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած փառատօնը՝ «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ» բնաբանով:

Փառատօնը ընթացք առաւ Լիբա-

նանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակներուն ծածանումով՝ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ հնչած Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած քայլերգներով:

ՋԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Փառատօնին սկիզբը տեղի ունեցաւ ջահավառութիւն: Վաստակաշատ նախկին խմբապետներ՝ եղբ. Աբօ Մոսիկեան եւ քոյր Յասմիկ Մուրատեան Շրջանային խմբապետութեան հետ կատարեցին 100-ամեակի ջահավառութիւնը: Ապա, խումբ մը սկստուներ գործադրեցին օրուան գեղարվեստական յայտագիրը, որուն ընթացքին անոնք դաշտին մէջտեղ պատկերուած Արարատի ստորոտին կազմեցին Արեւմտահայաստանի քարտէսը: Այնուհետեւ, ներկայացուցին պա-

րերու շարք մը եւ ֆլեշմոպ՝ Սարդարապատի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքի շրջափակին մէջ կառուցուած Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակի յուշակոթողներու ձեռագրիներուն դիմաց:

Ֆլեշմոպի ընթացքին հնչեց 100-ամեակի յուշակոթողին մասին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին արտասանած պատգամէն բաժին մը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՄԲԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Հայկ Թապազեան: Դաշտը լեցուցած ժողովուրդն ու պատկան մարմիններու ներկայացուցիչները ողջունելէ ետք, եղբ. Թապազեան դիտել տուաւ, որ իր հիմնադրութեան առա-



Լուսանկարները՝ ԱՐԱՍ ՍՈՍՈՒՆՃԵԱՆԻ՝ AMAYA



ջին տարիներէն Հ.Մ.Ը.Մ-ը հանդիսացաւ ոգեւորիչ ուժ, ծառայեց հայութեան՝ հայրենիքի մէջ թէ անկէ դուրս, եղաւ մարզական խաղերուն առաջնորդն ու դրօշակիրը, կերտեց յաղթանակներ՝ ժողովուրդին պարգեւելով փառքի ու պարծանքի օրեր: Ան բաւ, որ իր գոյութեան 100 տարիներուն Հ.Մ.Ը.Մ-ը եղաւ ծննդավայրը սկաուտութեան եւ մարմնակրթութեան՝ սատարելով նաեւ ազգապահպանման, հայ անհատի դաստիարակութեան՝ ֆիզիքապէս եւ հոգեպէս:

Եղբ. Թապազեան իր խօսքին մէջ անդրադարձաւ 100 տարի առաջ կերտուած Հայաստանի Հանրապետութեան, որ հիմը հանդիսացաւ այսօրուան անկախ Հայաստանին՝ աւելցնելով, որ 100 տարի առաջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ-ը իր շուրջը ունեցաւ սկաուտական եւ մարզական հզօր բանակ մը, որ նուիրաբերումով եւ զոհողութեամբ ծառայեց ազգին ու տէր կանգնեցաւ Եռագոյնին:

«Երկար ուղի կտրած է Հ.Մ.Ը.Մ-ը՝ հասնելու իր պատմութեան այս պատուաբեր փուլին: Այդ պատմութեան իրենց ներդրումը ունեցած են բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ-ականներ, որոնք գործեցին ու անցան՝ անոնց գործը եւ Ար-

ցախեան ազատագրական պայքարին համար նահատակուած Վարդան Բախչեաններն ու Վիգէն Զաքարեանները վկայ: Ազգային սկզբունքներու վրայ հիմնուած որեւէ կազմակերպութիւն կամ միութիւն, որ կը գոյատեւէ եւ կ'ունենայ իր հիմնադրութեան ամեակները, անպայման այս բոլորը կը պարտի իր անդամներու հաւաքական ճիգերուն, զոհաբերութեան եւ կամաւոր աշխատանքին: Պիտի տանք ի շահ ազգին ու հայրենիքին, որպէսզի անա-

ղարտ մնայ մեր ազգային դիմագիծը, միութենական ոգին եւ հաւաքական կամքը», շեշտեց եղբ. Թապազեան:

Շարունակելով, ան հաստատեց, որ իրենց նախորդներուն նման այսօրուան միութենականներն ալ յանձնառու են շարունակելու առաքելութիւնը՝ շնորհիւ հայու գիտակցութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ականի հաստատակամութեան: 100-ամեակի առիթով Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը պատրաստ է քալելու հիմնադիրներուն ուղիէն՝





պատրաստելու համար առողջ, պարտականութեան գիտակից, արի ու վեհանձն սերունդներ:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
100-ԱՄԵԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ**

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան դիտել տուաւ, որ արդար հպարտութեամբ, այսօր, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքը փառատօնով մը կը նշէ հայկական պետականութեան վերականգնման եւ իր սիրելի միութեան հիմնադրութեան 100-ամեակի զոյգ տարեդարձները:

28 Մայիսի կարեւորութեան անդրադառնալով, եղբ. Մկրտիչեան նշեց, որ այդ օրը նոր էջ կը բացուէր հայոց պատմութեան մէջ, ազատ ու անկախ իր երկրին մէջ հայը կը դառնար լիբրալ քաղաքացի, կ'ունենար բանակ, խորհրդարան, կառավարութիւն, դատական եւ դիւանագիտական համակարգ: Հայաստան վերստին կը յայտնուէր աշխարհի քաղաքական քարտէսներուն վրայ, եւ հայ մարդը կը վերագտնէր ազգային իր արժանապատուութիւնն ու հպարտութիւնը: Այդ վերագարթօնքին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան ակնարկելով ան ըսաւ. «Նոր հայութեան ստեղծման ճիգին իր

մասնակցութիւնը կը բերէր Նոյեմբեր 1918-ին հիմնուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, որ հազիւ ստեղծուած, կը լծուէր որբերէն կամաւոր բանակ պատրաստելու նուիրական աշխատանքին, հայ նորահաս սերունդները կրթելու, դաստիարակելու եւ հայեցի առողջ միջնորդութիւն մէջ մեծցնելու առաքելութեան: Հայութեան ծոցէն եւ հայութեան համար ծնած այս միութիւնը, այնուհետեւ, Մայիս 28-ին հետ կը շարունակէր իր անբաժան երթը եւ իր անփոխարինելի տեղը կ'ունենար մեր ժողովուրդի կեանքին մէջ: Հ.Մ.Ը.Մ-ը կը դառնար Մայիս 28-ի արժէքներուն դրօշակիրը եւ Եռագոյնին պաշտպանը»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան լուսարձակի տակ առաւ միութեան 100 տարուան բեղուն կեանքն ու հարուստ գործունէութիւնը՝ հաստատելով, որ ամբողջ դար մը միութիւնը եղաւ ազգային արժէքներու պահպան, ազգային սերունդներու կերտիչ եւ ազգային իրաւունքներու հետապնդման նուիրուած միութիւն, որուն սկաուտական եւ մարզական շարքերուն մէջ հասակ առին իրերայաջորդ սերունդներ՝ այս համոզումով, այս դաստիարակութեամբ եւ «միշտ պատրաստ» գործելու տրամաբանութեամբ: Փառատօնին անդրա-

դառնալով, ան ըսաւ, որ փառատօնը միութեան 100-ամեակի տօնակատարութիւններէն մէկն է միայն, իսկ գլխաւոր տօնակատարութիւնները ընթացք պիտի առնեն այս ամառ Հայաստանի մէջ տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումով, շքեղ տողանցքով, Վահան Չերազի կիսանդրիին բացումով եւ 100-ամեակի պաշտօնական հանդիսութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը հաստատեց, որ 100-ամեակը տօնակատարութիւններէն անդին առիթ է Հ.Մ.Ը.Մ-ի ընտա-



նիքին համար վերանորոգելու իր ուխտը՝ ազգային մեր ընդհանրական նպատակներուն ծառայելու, կերտելու հայ նորահաս սերունդներ՝ ազգային առողջ մթնոլորտի մէջ, իրենց ազգին ու հայրենիքին նկատմամբ յանձնառութեան զխտակից: Ան աւելցուց, որ մերօրեայ բազում մարտահրաշքներու լոյսին տակ, միութեան ուսերուն դրուած է մեծ ու պատասխանատու բեռ՝ մեր պատանիներն ու երիտասարդները համախմբելու, դաստիարակելու եւ ազգային նպատակներով առաջնորդելու համար: «Հ.Մ.Ը.Մ-ի պատմութիւնը լաւ պէտք է սերտել՝ տեսնելու համար, թէ մարմնակրթական այս միութիւնը ինչպէ՞ս կարողացած է դար մը ամբողջ կանգուն մնալ հաւատարմութեամբ, նուիրեալ մարզիկներու եւ անձնուէր վարչականներու նիւթական ու բարոյական հսկայական զոհողութիւններուն շնորհիւ: Հ.Մ.Ը.Մ-ի անցեալը լաւ պէտք է ուսումնասիրել՝ գիտնալու համար, թէ ի՞նչ կը նշանակէ միութենականութիւն, ի՞նչ կը նշանակէ մարզական ոգի, ի՞նչ կը նշանակէ կամաւոր աշխատանք, լուռ եւ հետեւողական ծառայութիւն, առանց որեւէ ակնկալութեան ու վարձատրութեան», յայտնեց ան:

Ապա, եղբ. Սիլրտիչեան լուսարձա-



կի տակ առաւ Հ.Մ.Ը.Մ.-ժողովուրդ սերտ ու անկեղծ կապը՝ նշելով, որ «Մեր ժողովուրդը ակնածանքով կը նայի Հ.Մ.Ը.Մ-ին, որովհետեւ քաջ գիտէ, որ ան ազգային ներշնչումի եւ խանդավառութեան մնայուն աղբիւր կը հանդիսանայ: Երբ «Յառաջ նահատակ»ը կը հնչէ մեր մարզադաշտերուն վրայ, ամբողջ հայ ժողովուրդի զաւակներուն սրտերն են, որ կը թնդան ազգային ապրումներով: Երբ մեր տղաքն ու աղջիկները կը տողանցեն դաշտերու վրայ՝ հայ ժողովուրդի պայծառ ապագան է, որ կը պարզուի մեր դիմաց: Երբ մետալակիր մեր մարզիկները կը դիմաւորենք՝ իրենց յաջողութիւններուն մէջ հաւատարմութեամբ քրտինքն ու վատակն է, որ կը տեսնենք: Ու երբ մեր մատուցած սկստուները կը տեսնենք, անոնց մէջ վաղուան յանձնառու հայերն են, որ կ'ողջունենք»:

Իր խօսքը եզրափակելով, եղբ. Սիլրտիչեան յայտնեց, որ 100-ամեակը բոլորած միութիւնը յառաջիկային պիտի ըլլայ աւելի՛ հայկական, աւելի՛ ընդհանուր եւ աւելի՛ արդիական միութիւն՝ աշխարհասփիւռ իր 110 մասնաճիւղերով, իր հայրենատենչ քաղաքներով ու հայրենակարօտ մարզիկներով:

ԴՐՕՇՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՄՈՒՏՔԸ ՄԱՐԶԱԴԱՇՏ

Խօսքերուն յաջորդեց փառատօնին երկրորդ բաժինը՝ առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան շեփորախումբին, որուն կարմիր, կարոյտ, նարնջագոյն դրօշներով հետեւեցան Հ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան անդամներ: Յիշեալ դրօշներուն հետեւեցաւ լիբանանեան դրօշը:

Յատկանշական եղաւ հայկական Եռագոյնին մարզադաշտ մուտքը, ինչ որ ներկայ հազարաւոր բազմութեան մօտ ստեղծեց մեծ խանդավառութիւն:

Այս տարի, առաջին անգամ ըլլալով, Եռագոյնով տողանցեցին հարաւային Լիբանանի մէջ հաստատուած ՅԻՆԻԼ-ի միջազգային խաղաղարար ուժերուն մաս կազմող հայկական բանակի խումբ մը գինուորներ, որոնք արժանացան լիբանանահայութեան ջերմ ծափողոյցներուն: Անոնք տողանցելէ ետք կանգնեցան Արեւմտահայաստանի քարտէսին ետին՝ իբրեւ պահպան հայոց ազատ, անկախ ու միացեալ Հայաստանին:

Եռագոյնէն ետք դաշտ մուտք գործեց Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի դրօշը, որուն յաջորդեց Շրջանային խմբապետութեան տողանցքը:





ՏՈՂԱՆՑՔԸ

Կարգը հասաւ սպասուած տողանցքին:

Յաջորդաբար տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի 10 մասնաճիւղերը՝ Պէյրութի, Չահլէի, Թրիփոլի, Պուրճ Համուտի, Այնճարի, Ճիւնիի, Անթիլիասի, Ժրաէյտէի, Պաուշրիէի եւ Ռաուտայի մասնաճիւղերու սկառուտական խումբերը իրենց երէցներով, պարմանուհիներով, արհներով ու արեւնոյճներով, դայիկներով, արծւիկներով ու մոկիկներով:

Տողանցեցին նաեւ նախկին սկառուտ խմբապետներն ու խմբապետուհիները: Ապա դաշտ մուտք գոր-

ծեցին Հ.Մ.Ը.Մ.ի մարզական միաւորները, որոնց շարքին՝ Փուլթպոլի դպրոցը, Փուլթպոլի ներկայացուցչական կազմն ու կրտսերները, Հ.Մ.Ը.Մ.ի պասքէթպոլի տղոց ու աղջկանց խումբերը՝ իրենց ախոյեանական բաժաններով, փինկփոնկի ախոյեաններու խումբը, աթլէթիզմի, հեծելաըշաւի, թրէաթլոնի խումբերը, ճատրակի մարզիկները, Հ.Մ.Ը.Մ.ի թրիփոլի մարզիկները, Պուրճ Համուտի, Անթիլիասի եւ Պաուշրիէի Փուլթպոլի եւ պասքէթպոլի մարզիկները, ինչպէս նաեւ՝ քոնկ Փուլի եւ ուու շուի մարզիկները:

Տողանցքին միացան ԼԵՎԱՄ-ի մարզախաղերուն մասնակից հայկական վարժարանները: Ազգային Եղիշ Մանուկեան քոլէճ, Ազգային Միացեալ վարժարան, Անարատ Յղուլթեան Սրբոց Հռիփսիմեանց վարժարան, Հայ Աւետարանական Թորոսեան

վարժարան, Համազգայինի Մերանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան, Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն վարժարան, Հայ Աւետարանական Շամլեան-Թաթիկեան վարժարան, Հայ Կաթողիկէ Սրբուհի Ազնէս վարժարան եւ Հայ Կաթողիկէ Ս. Խաչ-Գէորգ Հարպոյեան վարժարան:

Տողանցքի աւարտին, խումբ մը սկառուտներ հայերէն տառերով կազմեցին 100-ամեակի նշանաբանը՝ «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ»:

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՓԱԿՄԱՆ ԽՕՍՔԸ

Փառատօսին փակման խօսքը արտասանեց եւ հայրական իր պատգամը փոխանցեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան: Ան լուսարձակի տակ առաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակները՝ դիտել տալով, որ միութիւնը իր գոյութեան ամբողջ ընթացքին, Եռագոյնի խորհրդաւոր հովանիին տակ, Հայաստանի սիրով տոգորուած եւ հայութեան ծառայութեան գործին կոչուած սերունդներ կազմաւորեց:

«Անկասկած, մեր ազգային պատմութեան ամէնէն խրոխտ եւ ամէնէն զօրեղ դէպքերէն մէկն էր 28 Մայիս 1918-ին հռչակուած Հայաստանի անկախութիւնը, որ կ'իրականանար Հայոց Յեղասպանութեան արհաւիրքներու մթնոլորտին մէջ, վեց դարերու ստրկութեան մռայլ պայմաններէն ետք, երբ հայ ժողովուրդը դարձած էր արիւնաբամ եւ Հայաստանը բոլորովին լքուած էր իր բախտին՝ իրողապէս անէանալու սպառնալիքին տակ», ըսաւ Առաջնորդը՝ աւելցնելով, որ նման դառն պայմաններու մէջ էր, որ Արամ Մանուկեանի ղեկավարութեամբ ոտքի կանգնեցաւ հայութիւնը, մղեց ճակատամարտներ, արիւնը խառնեց հայրենի հողին ու իր սեփական բազուկի ուժով ապահովեց իր ազատութիւնը:

«Հայաստանի Հանրապետութեան

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԵՅՐՈՒԹԻ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԱՂՋԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՆԱՅ ԼԻՔԱՆԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ

15 Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի փինկփոնկի աղջկանց խումբը հանդիսացաւ Լիբանանի Ա դասակարգի երկրորդ, երբ աւարտականին 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Նայրուա Քամարիէն:

Կիսաւարտականին, Հ.Մ.Ը.Մ. 3-2 արդիւնքով յաղթեց Արսայ Ուայ Ռիսարա Քիարշիմային:

Հ.Մ.Ը.Մ.ի փինկփոնկի այս փարեշրջանի խումբին մաս կազմեցին քոյրեր Նոէլ Քէլշեան, Լարա Քէլէպաշեան, Սեւան Չաքմաքճեան եւ Միլէյ Պոյաճեան՝ մարզիչ ունենալով եղբ. Բաֆֆի Մունջօղլեանը:



100-ամեակին առիթով պարտինք հեղ մը եւս նայիլ մեզի ազատութիւն պարզեւած մեր ազգի հերոսներու կեանքի օրինակին, որպէսզի կենդանանք հաւատքով, տեսիլքով, երազով, իղձերով եւ իտէալներով: Այլապէս ի՞նչ կ'արժէ 100 տարի առաջ ձեռք բերւած ազատութիւնը, եթէ այսօրուան մեր կեանքով եւ աշխատանքով մենք չենք ձգտիր հասնելու մեր ժողովուրդի անկատար իղձերուն եւ տենչերուն: Ի՞նչ կ'արժէ ազատ ու անկախ Հայաստանը, եթէ անոր հողին ու քարին մէջ չենք ուզեր զետեղել սեփական մեր կարողութիւններուն դրոշմը: Ի՞նչ կ'արժէ ազատութիւնը, եթէ չենք ձգտիր աւելի լուսաւոր ու պայծառ արշալոյսներ քանդակել հայրենի երկնակամարին վրայ ու դէպի նոր վերելք եւ յաղթանակ առաջնորդել մեր կեանքին ճամբան», ըսաւ Շահէ Եպս. Փանոսեան: Այս պարունակին մէջ Առաջնորդը կոչ ուղղեց ազգովին ոգեւորուելու, որպէսզի Լիբանանի

մէջ ու աշխարհի չորս ծագերուն շարունակենք ապրիլ իբրեւ հայ մարդ, որ զալիք 100-ամեակներու յուսովառ իրադարձութիւններուն տեսիլքով պիտի մղէ իր ազգային զոյապայքարը: Իր պատգամին աւարտին, Առաջնորդը ըսաւ, որ պէտք է փառք տանք Աստուծոյ համայնական մեր կեանքին մէջ գործող մեր եկեղեցիներուն, կառույցներուն, միութիւններուն եւ կազմակերպութիւններուն համար, որոնք «ազատ ու անկախ Հայաստանի սիրով, մեր ժողովուրդի բարոյական ամրութեան համար, հանապազօրեայ աշխատանքով մեզի հետ են սփիւռքեան մեր կեանքին մէջ,



որպէսզի մեր ազգի մատղաշ սերունդը լսէ Հայաստանի կանչը եւ վառ պահէ ազատութեան ու անկախութեան տեսլականը»:

Հոսկ, փառատօնը աւարտեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ հրավառութեամբ:

PINK
Kimberley[™]
AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 28-ՐԴ ԽԱՂԵՐԸ ՄԵՐԻԼԵՆՏԻ ՄԷՋ

Թղթակից ՄԵՐԻԼԵՆՏ

ՀՄԸՄ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Նաւասարդեան 28-րդ խաղերը տեղի ունեցան Մերիլենտի մէջ, 30 Յուլիսէն 4 Յուլիս 2018, նախաձեռնութեամբ ՀՄԸՄ-ի Շրջանային Վարչութեան, հովանաւորութեամբ Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեանի, ներկայութեամբ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեանի եւ հիւրընկալութեամբ ՀՄԸՄ-ի Ուաշինկթընի մասնաճիւղին: Բացման հանդիսութեան ներկայ եղան Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչ Ռոպէրթ Աւետիսեան (դեսպան Գրիգոր Յովհաննիսեանի հետ ան ներկայ եղաւ նաեւ երկկոյեան ընթրիքին), Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Վահէ Թանաչեան եւ ՀՕՄ-ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի ներկայացուցիչ Սեւան Գոլճեան: Պատուոյ նախագահութիւնը ստանձնած էին տէր եւ տիրին Սամիլ եւ Վարդենի Ժարեան:

Մասնակցողները վայրկեան մը

յոտնկայս յարգեցին յիշատակը տարիներ շարունակ ՀՄԸՄ-ին ծառայած, Տիթրոյթի մասնաճիւղի «սիւն»երէն՝ եղբայր Սոնի Կափուրին:

Չորս օրերու վրայ երկարող խաղերու ընթացքին, դաշտերու վրայ, պանդոկի միջանցքներուն եւ ամէնուրեք ՀՄԸՄ-ական մարզիկը հանդիպեցաւ իր հարազատներուն, որոնք ժամանած էին Արեւելեան Մ. Նահանգներու գանազան մասնաճիւղերէն:

Բոլոր մարզիկները, սկստանները եւ համակիրները խումբ առ խումբ ժամանեցին Ուաշինկթըն, ուր տեղի ունեցաւ մասնաճիւղերու պատասխանատուններու կարճ ժողով մը, բացատրելու շաբաթավերջի մարզախաղերուն դասաւորումը, օրէնքները եւ կարգապահական խստապահանջ պայմանները:

ՀՄԸՄ-ի տարեկան այս խաղերը, առիթ մըն են սատարելու ՀՄԸՄ-ի վսեմ նպատակին, երբ շրջանի մասնաճիւղերէն ժամանած ՀՄԸՄ-ականներ եւ համակիրներ, դօտեպնդուած ՀՄԸՄ-ի շունչով եւ ոգիով, կը հաւաքուին Նաւասարդեան խաղերու դրօշին տակ՝ մրցելու հայկական ազնիւ ոգիով, ստեղծելու խանդավառ

մթնոլորտ մը, ծառայելու «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին, միշտ ի միտի ունենալով, որ այս խաղերէն յաղթական դուրս պիտի դայ ՀՄԸՄ-ը միայն:

Ծնողներ ու բարեկամներ ոգեւորիչ խանդավառութեամբ մը այցելեցին դաշտէ դաշտ, քաջալերելով իրենց մարզիկները, որպէսզի նորանոր յաղթանակներ արձանագրեն իրենց մասնաճիւղերուն համար, առանց անդրա-



դառնալու, որ Հ.Մ.Ը.Մ-ին իրենց անդամակցութիւնը ինքնին ամենամեծ յողթանակն է մեր ազգային դիմագիծի պահպանման ճիգերուն մէջ: Փակման հանդիսութեան ավարտին տեղի ունեցաւ բաժակներու եւ յուշատախտակներու բաշխում:

3 Յուլիսի երեկոյեան տեղի ունեցաւ յողթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը: Պաշտօնական բաժինը բացւեցաւ պատուոյ հիւրերու մուտքով: Օրուան երգիչն էր Արմէնչիկը:

Նաւասարդեան 28-րդ խաղերու «Ամէնէն ակնի բարեխաղած մասնաճիւղին բաժակը» ստացաւ Շիբակոյի մասնաճիւղը, իսկ «Տիպար մասնաճիւղի բաժակը»՝ Պոսթընի մասնաճիւղը:

Արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը-

- 1. Ուաշինկթըն եւ Նիւ Եորք 43 կէտ
- 3. Շիբակո 38 կէտ
- 4. Պոսթըն եւ Տիթրոյթ 18 կէտ
- 6. Մերիմէք Վալի 10 կէտ
- 7. Նիւ Ճըրզի 5 կէտ
- 8. Թորոնթօ 4 կէտ

Չորս մասնաճիւղեր՝ Փրովիտընս, Ֆիլատելֆիա, Ֆլորիտա եւ Ալպընի չկարողացան որեւէ կէտ ապահովել:



ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ Հ.Մ.Ը.Մ.Ի ՏԵՍԼԱԿԱՆՈՎ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի այս փարուան Նաւասարդեան խաղերը շար արեւի յիշարակելի էին, նկատուեցաւ որ այս փարի նաեւ կը նշուի Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակը:

Միութիւն մը, որ արժանի է իւրայայտուի շքանշանի:

Այո... Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեայ այս շքանշանը անհատի մը փրուած չէ: Ընդհակառակը, անկէ շար արեւին է, որովհետեւ ան կ'արժեւորէ շրջաններ, հունչքեր եւ սերունդներ:

Հարիւրամեայ այդ շքանշանին մէջ կայ համեստութիւն, հաւաստիք, ծառայութիւն եւ մարզավայել հայորդիի փիպար:

Բնականաբար, այս պարճառով է, որ մենք մեր զուակները կը յանձնենք այս միութեան, պարտաստեւորու համար արի եւ վեհանձն հայորդիներ, բարջրանայու եւ անոնց հետ ալ բարջրացնելով սերունդ մը:

Այսպէս է որ կը գործէ Հ.Մ.Ը.Մ.ը:

Այս փեսայիսնով է, որ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները սրեղծեցին այս միութիւնը:

Յիշարակելի է, որ Հ.Մ.Ը.Մ.ին համար, անչին օրինակով գործելու հասկացողութիւնը իր ներշնչման աղբիւրը ունի միութեան ծրագրիկանոնագիրը, որ իր էութեամբ եւ չգրումով կարարեալ եւ օրինակելի ամբողջութիւն մըն է:

Հերեոդականօրէն պարտաստեւորուած, լաւապէս թրծուած եւ սերունդէ սերունդ փոխանցուած ջանք կը բոցավառի:

Իւրայայտուի նկարագիր կազմելու, բարոյական անաղարտ դիմագիծ կերպելու զանազան եւ չեւերէն ու միջոցներէն ամենէն հիմնականը նոյնիսկն Հ.Մ.Ը.Մ.ականի փիպարն է: Եւ այդ փիպարն է, որ կը մնայ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան յաջողութեան մեծագոյն զարկահիքը:

Նաւասարդեան այս խաղերը, որոնք փեղի ունեցան Ուաշինկթընի մէջ, նոր խանդ եւ հաւաստիք ներշնչեցին հարիւրամեայ այս միութեան:

Խաղերէն ետք, պարջաճօրէն պիտի կարարուին նաեւ այլ հանդիսութիւններ, բանակումներ, փողանցքներ, հաւարներ եւ չեռնարկներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակը նշելու համար:

Ի վերջոյ, յաղթական հայութիւնն է եւ Հ.Մ.Ը.Մ.ը:

Հովին դիմաց մերք ինքն իր մէջ ծայուելով ու մերք հպարտօրէն ցունելով կը ծածանի անոր դրօշը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի



ՔԱՀԱՄ-Ի 34-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՓԱԿՈՒՄ ԵՒ 43-ՐԴ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆՆԻ ԲԱՑՈՒՄ

Թղթակից
ԿԼԵՆՏԷՅԼ

18 Մարտ 2018-ի երեկոյեան, Կլենտէյլ գոլէճի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի ՔԱՀԱՄ-ի (Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղեր) 34-րդ խաղերուն փակման հանդիսութիւնը, ներկայութեամբ պաշտօնական հիւրերու եւ հազարաւոր ծնողներու: Միաժամանակ, յայտարարուեցաւ բացումը այս տարւան Նաւասարդեան մարզախաղերուն: ՔԱՀԱՄ-ը կը կազմակերպուի ամէն տարի, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան մարզական խորհուրդին կողմէ եւ իր տարողութեամբ երկրորդ մեծագոյն ձեռնարկն է Նաւասարդեանէն ետք:

ՆԵՐԿԱՆԵՐԸ

Հանդիսութեան ներկայ էին Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոս-

եանի ներկայացուցիչ Վազգէն Ա. Քհնյ. Աթմաճեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիզէն Դաւթեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի անդամ Աւետիք Իզմիրլեան, Ազգային վարժարաններու ինամակալ մարմինի ներկայացուցիչ Լենա Քորթոշեան, նախորդ Նաւասարդեանի պատուոյ նախագահներ՝ Վիզէն եւ Նոնո Աբէլեաններ, անցեալի պատուոյ նախագահներ, Շրջանային Վարչութեան եւ մարզական յանձնախումբի անդամներ, ինչպէս նաեւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ, վարժարաններու տնօրէններ եւ ծնողներու հոծ բազմութիւն մը: Փակման ձեռնարկին հանդիսավարներն էին քոյրեր Սեղա Պէշլեան-Սաղպազարեան (հայերէն) եւ Մարիթա Մեծաչեան (անգլերէն):

Հանդիսութեան սկիզբը, ներկանե-

րը մէկ վայրկեան յոտնկայս լուսթեամբ յարգեցին յիշատակը Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներուն, որոնք 100





Photo by Berdj Djamdjian

տարի առաջ հիմը դրած էին այս կազմակերպությունն: Ապա, շեփորախումբը նուազեց Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերդները, մինչ սկսուածները կատարեցին դրօշակի արարողութիւնը:

ԽՕՄՔԵՐԸ

Ամպիրոն հրաւիրուեցաւ Վազգէն Ա. Քհնյ. Աթմաճեան, որ իր խօսքին

մէջ նշեց 2018 տարուան կարեւորութիւնը, իբրեւ Հայաստանի Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան հարիւրամեակ, ինչպէս նաեւ՝ Արցախեան ազատագրական շարժումի 30-ամեակ: Ան դրուատեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը, իբրեւ կազմակերպութիւն մը, որ 100 տարիէ ի վեր ազգային դաստիարակութիւն ջամբած է բազմաթիւ սերունդներու ու կը մնայ պատնէշի վրայ՝ աւելի ուժեղացած, աւելի ընդարձակուած: Քահանայ Հայրը Առաջնորդին անունով շնորհակտրեց ՔԱՀԱՄ-ը, որ տասնամեակներէ ի վեր կը համախմբէ հայ աշակերտութիւնը՝ մարզական խաղերու առողջ մթնոլորտի մէջ: Ան գնահատեց նաեւ մասնակից հայկական բոլոր վարժարանները ու ապա Տէրունական արօթքով օրհնեց ներկաները:

Այնուհետեւ, ամպիրոն հրաւիրուեցաւ Ազգ. Ֆերահեան վարժարանի տնօրէն Սօսի Շամբեան, որպէսզի մասնակից վարժարաններու տնօրէններուն անունով օրուան պատգամը փոխանցէ: Շամբեան դրուատեց ՔԱՀԱՄ-ի դերը եւ նշեց, որ ինչպէս իր զաւակը տարիներ առաջ յուզուած էր ՔԱՀԱՄ-ի փակման հանդիսութեան օրը, որովհետեւ անիկա իր վերջին

մասնակցութիւնն էր: Ան ընդգծեց ՔԱՀԱՄ-ի խաղերուն դրական ազդեցութիւնը մանկահասակ ու պատանի հայ աշակերտներու վրայ: Ապա, ան շնորհակտրութիւն յայտնեց ծնողներուն, խումբերու մարզիչներուն եւ մարզական խորհուրդի անդամներուն, որոնք ջանք չեն խնայեր հայ աշակերտներու միտքով ու ֆիզիքապէս առողջ դաստիարակութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Արամ Թովմաս: Ան ըսաւ, որ խոր հաւատք ունինք Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին ու այդ ոգիով է, որ կը կազմակերպենք ՔԱՀԱՄ-ի խաղերը, 34 տարիէ ի վեր: Այս տարի, Հ.Մ.Ը.Մ.ը իր բոլոր նախաձեռնութիւնները նուիրած է իր հիմնադրութեան 100-ամեակին: Մէկ դարէ ի վեր, Հ.Մ.Ը.Մ.ը իր սկսուածական ու մարզական գործունէութեամբ, ազգային դաստիարակութիւն կու տայ մանուկ, պատանի ու երիտասարդ սերունդներուն: Ան ընդգծեց բոլոր կամաւոր աշխատողներուն դերը այս գործին մէջ, ըլլան անոնք վարչականներ, մարզիչներ, կամ ծնողներ: Ապա, ան գնահատեց այն բոլոր



Photo by Berdj Djamdjian



դպրոցները, որոնք մասնակցեցան այս մարզախաղերուն, զնահատեց բոլոր կամաւորները, մարզիչներն ու ծնողները, որոնք անհամար ժամեր յատկացուցին ամիսներու վրայ երկարող այս մարզախաղերը յաջողութեամբ պսակելու համար:

Խօսք առաւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, որ յայտարարեց 43-րդ Նաւասարդեանի պատուոյ նախագահներուն եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ին անունները՝ յաջորդաբար տէր եւ տիկ. Համլէթ եւ Կրեթա Չրախչեաններ եւ Գօգօ Պալեան, երկուքն ալ Կեդրոնական Վարչութեան

նախկին անդամներ: Ան նաեւ պաշտօնապէս բացուած յայտարարեց 43-րդ Նաւասարդեանի մարզախաղերը, որոնց խորհրդանիշը եւս պարզուեցաւ բեմին վրայ, ներկաներու ջերմ ծափահարութիւններուն ընկերակցութեամբ:

ՏՈՂԱՆՑՔԸ

Հասաւ բոլորին կողմէ սպասուած պահը՝ ՔԱՀԱՄ-ին մասնակից աշակերտներուն տողանցքը, դարձեալ շեփորախումբին ընկերակցութեամբ: Տողանցքին մասնակցեցան վարժարաններու մարզական խումբերը, իւրաքանչիւրը անօրէնին առաջնորդու-

թեամբ, ինչպէս նաեւ՝ Շրջանային Վարչութիւնը, բոլոր մասնաճիւղերու սկսողներով՝ Հ.Մ.Ը.Մ-ի հարիւրամեակի խորհրդանիշով:

Տողանցքին ընթացքին, օրուան հանդիսավարները մէկ առ մէկ ներկայացուցին մասնակից վարժարանները՝ իրենց մարզական խումբերով: Տողանցէն ետք տեղի ունեցաւ մրցանակարաշխութիւն եւ բաժակներու տուչութիւն՝ խոյեան խումբերուն, նոյն խանդավառ մթնոլորտին մէջ: Ապա, Ազգ. Ֆերահեան Վարժարանի աշակերտական երգչախումբը, ղեկավարութեամբ արուեստագիտուհի Արաքսիա Վարդերեսեանի, աւելիով խանդավառեց ներկաները քանի մը ազգայնաշունչ երգերով ու ձեռնարկը փակեց Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի քայլերգով:

Բոլորը ժամադրուեցան դարձեալ հանդիպելու ՔԱՀԱՄ-ի յառաջիկայ խաղերուն, Հոկտեմբերին:

ՄԱՄՆԱԿԻՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ-ի ՔԱՀԱՄ-ի այս տարւան մարզախաղերը սկսան 22 Հոկտեմբեր 2017-ին՝ 10 վարժարաններու մասնակցութեամբ:-- Ազգ. Ռոզ եւ Ալեքս Փիլիպոս, Հայ կաթողիկէ Քոյրերու վարժարան, Հ.Բ.Ը.Մ-ի Մարի Մանուկեան-Տէմիրճեան, Ազգ. Ֆե-



րահան, Հայ Աւետ. Մերտինեան, Յովսէփեան, Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան, Սահակ Մեսրոպ, Ազգ. Արի Կիրակոս Մինասեան եւ Ազգ. Մեսրոպեան:

Նշեալ վարժարանները մասնակցեցան պատգեթպոլի 112, Փուլթպոլի 37 եւ վոլյպոլի 29 խումբերով: Աթլետիզմին մասնակցեցան 750 աշակերտներ, փինկ-փոնկի խաղերուն մասնակցեցան 135, իսկ ճատրակի՝ 85 աշակերտներ:

Մրցումներուն վերջնական արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը:-

ՊԱՍՔԵԹՊՈԼ.- Առաջին՝ Ազգ. Շամլեան վարժարան, 44 կէտ: Երկրորդ՝ Ազգ. Ֆերահեան վարժարան, 36 կէտ: Երրորդ՝ Ազգ. Ալեքս Փիլիպոս վարժարան, 16 կէտ: Չորրորդ՝ Հ.Բ.Լ.Մ-ի Մարի Մանուկեան վարժարան, 11 կէտ եւ հինգերորդ՝ Հայ Քոյրերու վարժարան, 4 կէտ:

ՖՈՒԹՊՈԼ.- Առաջին՝ Հ.Բ.Լ.Մ-ի Մարի Մանուկեան վարժարան, 11 կէտ: Երկրորդ՝ Ազգ. Շամլեան վարժարան, 9 կէտ: Երրորդ՝ Ազգ. Ալեքս Փիլիպոս վարժարան, 4 կէտ: Չորրորդ դիրքը զբաղեցին Ազգ. Մեսրոպեան եւ Ֆերահեան վարժարանները 3-ական կէտով: հինգերորդ՝ Հայ Աւետ. Մերտինեան վարժարան, 2 կէտով:

ՎՈԼԻՊՈԼ.- Առաջին՝ Ազգ. Ֆերահեան վարժարան, 13 կէտ: Երկրորդ՝



Photo by Berdj Djamdjian

Ազգ. Շամլեան վարժարան, 8 կէտ: Երրորդ՝ Հ.Բ.Լ.Մ-ի Մարի Մանուկեան եւ Յովսէփեան վարժարաններ՝ 3-ական կէտ: Չորրորդ՝ Ալեքս Փիլիպոս, Մերտինեան եւ Մեսրոպեան վարժարաններ, մէկական կէտով:

ՓԻՆԿ-ՓՈՆԿ.- Առաջին՝ Ազգ. Ֆերահեան վարժարան, 33 կէտ: Երկրորդ՝ Ազգ. Ալեքս Փիլիպոս վարժարան, 21 կէտ: Երրորդ՝ Ազգ. Մեսրոպեան վարժարան, 20 կէտ: Չորրորդ՝ Հ.Բ.Լ.Մ-ի Մարի Մանուկեան վարժարան, 7 կէտ: Հինգերորդ՝ Հայ Քոյրերու վարժարան, 5 կէտ:

ՃԱՏՐԱԿ.- Առաջին՝ Հ.Բ.Լ.Մ-ի Մարի Մանուկեան վարժարան, 21

կէտ: Երկրորդ՝ Ազգ. Ալեքս Փիլիպոս վարժարան, 11 կէտ: Երրորդ՝ Ազգ. Շամլեան վարժարան, 5 կէտ: Չորրորդ՝ Հայ Քոյրերու վարժարան՝ 4 կէտ: Հինգերորդ՝ Ազգ. Ֆերահեան եւ Մեսրոպեան վարժարաններ, 1 կէտ:

ԱԹԼԵԹԻՉՄ.- Առաջին՝ Ազգ. Ֆերահեան վարժարան, 33 կէտ: Երկրորդ՝ Ազգ. Շամլեան վարժարան, 21 կէտ: Երրորդ՝ Հ.Բ.Լ.Մ-ի Մարի Մանուկեան վարժարան, 20 կէտ: Չորրորդ՝ Ազգ. Ալեքս Փիլիպոս վարժարան, 7 կէտ: Հինգերորդ՝ Հայ Քոյրերու եւ Հայ Աւետ. Մերտինեան վարժարաններ, 5-ական կէտ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆԻ ՓԱԿՄԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ ԽԱՆԴԱՎԱՌԵՑ ԲՈՒՈՐԸ

- «ՀՐԱՇՔ»Ը ՅՈՒՁՈՒՄՈՎ ՊԱՐՈՒՐԵՅ ԱՄԲՈՂՁ ՄԱՐԶԱԳԱՇՏԸ

Թղթակից
ԿԼԵՆՏԵՅԼ



աբաթ, 7 Յուլիս 2018-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու 43-րդ Նաւասարդեան խաղերը եզ-

րափակուեցան հարիւրաւոր սկաուտներու եւ մարզիկներու աւանդական տողանցքով, որ թէ՛ խանդավառ եզրահարաւոր հանդիսատեսները եւ թէ՛ յուզեց բոլորը: «Պրըմիերկհէմ Հայ Աթուլ»ի մարզադաշտերուն վրայ կատարուած եզրափակիչ այս հանդիսութեան ներկայ էին Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի հիւպատոս Արմէրա Շաքարեան, Քալիֆորնիոյ նահանգային ծերակուտական էնթրնի Փորթանթիմո, Կլենտէյլի քաղաքապետ Զարեհ Սինանեան եւ քաղաքապետական խորհուրդի անդամ Վրէժ Ադաճանեան, Հ.Մ.Ը.Մ.ի

Կեդրոնական Վարչութեան անդամ Վրէժն Դաւթեան, Շրջանային Վարչութեան անդամներ, Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի անդամ Կարօ Իսպէնճեան, պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Համիլէթ եւ Կրեթա Զրախեաններ,

այս տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» Գօգօ Պալեան, ուղեկից կազմակերպութիւններու՝ ՀՕՄ-ի ու Համագգայինի Շրջանային Վարչութիւններու, ինչպէս նաեւ Ազգային Վարչութեան եւ Արեւմտեան Մ. Նահանգներու Հայ Դատի յանձնախում-





բի ներկայացուցիչներ, նախորդ տարիներու պատուոյ նախագահներ եւ «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, ինչպէս նաեւ՝ բազմահազար հանդիսատեսներ: Կ'արժէ նշել, որ հոն էր նաեւ 91 տարեկան վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Զաքար Չորպաճեան: Հակառակ իր հիւանդութեան, ան փափաքած էր անպայման ներկայ գրտնուիլ Նաւասարդեանի տողանցքին, որ կը գուզագրիպէր իր սիրած միութեան 100-ամեակին:

Մարգարաշտը գարդարուած էր Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներ Շաւարշ Քրիսեանի, Գրիգոր Յակոբեանի եւ Յովհաննէս Հինդլեանի մեծադիր պատկերներով, ինչպէս նաեւ՝ ամերիկեան, հայկական եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծադիր դրօշներով: Նախքան տողանցքը, երգի ու պարի «Հեքիաթն է կանչում» խումբը ներկայացուց մանկական եւ ազգային երգերու ու պարերու շարք մը, հաճելի եւ գուարթ մթնոլորտ մը ստեղծելով դաշտին մէջ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ

Աւելի ուշ, մարգարաշտ ժամանեցին Առաջնորդ սրբազանը, պատուոյ նախագահը եւ «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը, ընկերակցութեամբ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանի եւ սկսուտա-

կան պատուոյ ջոկատին: Ապա, բարձր թռչող ուղղաթիռէ մը վար ցատկեցին երեք անկարգելաւորներ՝ ամերիկեան, հայկական եւ Նաւասարդեանի դրօշներով: Անմիջապէս ետք տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին մասնակցութեամբ, որ կատարեց Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները:

Հանդիսավարներ Սեւակ Կարապետեան եւ Նորա Չափարեան ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծութեան հրաւիրեցին, ի յարգանս մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն, ինչպէս նաեւ՝ Արցախի ազատագրական պայքարին ընթացքին նահատակուած չորս Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Էնթրնի Փորթանթինօ իօսք առաւ, դրուատեց եւ ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութիւնը երիտասարդութեան առողջ դաստիարակութեան գործին մէջ, դրուատեց «Հրաշք» նախաձեռնութեան գաղափարը (Այս մասին կարդալ էջ 30), ապա նահանգային ծերակոյտի հռչակագիրը յանձնեց եղբ. Մանուէլ Մարսէլեանին:

Այդ օր շնորհաւորանքի եւ ողջոյնի իօսք ուղղած էր նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան: Նախագահին շնորհաւորագիրը կարդաց Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Մագո Կարապետեան: Բեմ բարձրացաւ եղբ. Մանուէլ Մարսէլեան, որ Շրջանային Վարչութեան անունով եւ երկու լեզուով նախ բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն ու աւելցուց. «Պատիւ ու յարգանք բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, մասնաճիւղերուն, Նաւասարդեանի կազմակերպիչ յանձնախումբին, ծրնողներուն եւ ձեր բոլորին: Ձեր հաւաքական աշխատանքով է, որ Նաւասարդեան մարգարաշտը կը հանդիսանան Սփիւռքի ամէնէն մեծ եւ ամէնէն կազմակերպուած մարգական նախաձեռնութիւնը»: Ապա, ան աւելցուց, որ այս տարին թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակն է եւ թէ՛ Արեւմտեան Մ. Նահանգներու մէջ անոր հիմնադրութեան 50-ամեակը. 50 տարուան երթով, ահաւասիկ այսօր մենք ունինք 19 մասնաճիւղեր՝ 6500 անդամներով: Ան աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ.ը անցեալէն կու գայ, սակայն ունի ապագայի հաստատուն հեռանկարներ ու տեսիլք, որ կը ձգտի երիտասարդութիւնը դաստիարակել իրեն տիպար հայ քաղաքացիներ: Գալիքի իմաստով, ան յիշեց «Հրաշք» ծրագիրը, որ կը նպատակադրէ համախմբելու յատուկ կարիքներ ունեցող երեխաներն ու պատանիներ՝ իրենց համար յատուկ մարգարաշտը:

Եղբ. Մարսէլեան նաեւ նշեց «Ապա-





գայ» ծրագիրը, որ նպատակ ունի համախմբել երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներէ բաղկացած ընտանիքներ: Ապա, ան ներկայացուց այս տարուան պատուոյ նախագահը՝ տէր եւ տիկ. Համլէթ եւ Կրեթա Չրախչեանները, ինչպէս նաեւ՝ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Գոգօ Պալեան, ընդգծելով տասնամեակներու վրայ երկարող անոնց նուիրումը Հ.Մ.Ը.Մ.ին, ու եզրափակեց ըսելով. «Համլէթ Չրախչեանի եւ Գոգօ Պալեանի նմաններն են, որոնց շնորհիւ թէ՛ Նաւասարդեանը եւ թէ՛ տարուան ընթացքին մեր միւս աշխատանքները կը կատարուին, եւ անոնց ընդմէջէն՝ Հ.Մ.Ը.Մ.ը կ'աճի: Իրենց նմաններուն շնորհիւ է, որ Հ.Մ.Ը.Մ.ը գոյատեւած է 100 տարի ու պիտի շարունակէ ուռճանալ գալիք տարիներուն եւս»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ՝ «Հ.Մ.Ը.Մ.Ի ՀՐԱՇՔԸ»

«Հ.Մ.Ը.Մ.ի հրաշքը» արտայայտութիւնը պատահականօրէն ձղրուած չէ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Երջանային Վարչութեան նոր նախաշեռնութեան համար: Արդարեւ, Նաւասարդեան այս փարուան մարզախաղերուն, առաջին անգամ ըլլալով, իրենց մասնակցութիւնը բերին յարուկ կարիքներ ունեցող խումբ մը պատանիներ: Անոնք ի ծնէ ունին որոշ թերութիւններ, բայց եւ այնպէս չեն դադրիր մերը ըլլալէ:

Հ.Մ.Ը.Մ.ի այս նախաշեռնութիւնը նպատակադրեց փորութիւն ընել այս խաւին, իբրեւ մեր հանրութեան լիիրաւ ու արժանապարհի անդամներ: Այս նպատակով ալ, Երջանային Վարչութիւնը ամիսներ առաջ յառաջացուց յարուկ յանձնախումբ մը, որպէսզի մասնագիտական հիմունքներով կազմակերպէ այս երեխաներուն մասնակցութիւնը Նաւասարդեան մարզախաղերուն:

Յանձնախումբին մաս կազմեցին Նանօր Գապագեան, Ռազմիկ Միմոնեան, Ալին Հապէշեան, Լորի Սվազլեան, Սեւակ Կարապետեան եւ Սերժ

Գրասեան: Երջանային Վարչութեան իրենց կապն էր Արամ Պեքարեան:

«Մարզիկ»ի ներկայացուցիչը առիթը ունեցաւ Երջանային Վարչութեան կեդրոնապետիին մէջ զրուցելու յանձնախումբի կարգ մը անդամներուն հետ, որոնք փոխին հեղափոխութեան եւ կարեւոր փեղեկութիւններ «Հրաշք» կոչուած այս նախաշեռնութեան մասին:

Բնականաբար, գործակցութիւն կայ ամերիկեան նման մասնագիտացած ընկերակցութեան մը հետ: Յարուկ կարիքաւորներու հարցերով զբաղող Lanterman Registry Center for Special Need կազմակերպութեան հետ գործակցաբար, վայելելով նաեւ յարուկ կարիքաւոր երեխաներու ծնողներու եւ մասնագէտներու զօրակցութիւնը, յարուկ կարիքներ ունեցող մօտաւորապէս 18 հոգի, 5-20 փարեկան, իրենց մասնակցութիւնը բերին Նաւասարդեան այս փարուան մարզախաղերուն: Անոնք մասնակցեցան իրենց համար մասնագիտականօրէն կազմակերպուած պատրէպալի, ֆութպոլի, սքլէթիօմի զանազան

Խօսք տրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեանին, որ ողջունեց միութեան 100-ամեակը ու այս ափերուն վրայ անոր գործունէութեան 50-ամեակը: Հ.Մ.Ը.Մ.ի յաջողութեան գաղտնիքին անդրադառնալով, եղբ. Դաւթեան զայն բնութագրեց երկու բառով. «Շարունակականութիւն» եւ «Փոփոխութիւն»: Իւրաքանչիւր սերունդ շարունակեց իր նախորդներուն կատարածը, միաժամանակ նոր տեսիլքով եւ նոր աշխատանքներու ձեռնարկելով: Այս իմաստով, ան օրինակ բերաւ օրուան պատուոյ նախագահը եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը, որոնք ո՛չ միայն շարունակած են իրենց նախորդներուն գործը, այլեւ առաջնորդուած են ապագայի նկատմամբ նոր տեսիլքով: «Այո՛, շարունա-



խաղերու եւ... փակման հանդիսատար փողակցքին:

Նանօր Գապագեան յայտնեց, թէ անհրաժեշտ է շար մասնագիտական մօտեցում. այս նախաշեռնութեան մասնակից են ո՛չ միայն ծնողներ, այլ նաեւ կամուրներ եւ կարիքատար երեխաներու զանազան խնդիրներու մէջ մասնագիտացած անհէր: Ան աւելցուց, որ ցարդ առիթ չէ փրուած, որ կարիքատար երեխայ-պատանիները մասնակցին նման մարզախաղերու եւ Հ.Մ.Ը.Մ.ն է, որ առաջին անգամ ըլլալով այս առիթը կը սրբաբանէ իրենց: Ան քաջալերեց կարիքատար երեխայ ունեցող ծնողները, որպէսզի չքաշուին իրենց զաւակները բերելու այս նախաշեռնութեան մասնակցութեան համար:

«Գիտէք, մեր շրջապատէն ներս կայ ամօթի անփեղի զգացում. ծնողները ընդհանրապէս չեն ուզեր իրենց կարիքատար զաւակները հանրային շեռնարկներու առնչել: Սակայն, այս երեխաները մենք կը նկատենք մեր հասարակութեան լիարժէք անդամները, որոնց նկատմամբ ոչ միայն պէտք է յարգանքով վերաբերիլ, այլեւ իրենց յարուստ մարզախաղեր կազմակերպելով անոնց զգացնել, թէ մեր հանրութեան լիարժէք անդամներն են իրենք»:

Նանօր Գապագեան յայտնեց նաեւ, որ այսօր, նորածիններու մօտաւորապէս 2 փոկոսը կը ծնի բնական թերութիւններով. թերութիւններ, որոնք երբեմն ուշ կը յայտնուին: Սակայն այդ բնական թերութիւնները պէտք չէ պատճառ դառնան, որ երեխաները

գրկուին հանրային նախաշեռնութիւններէ, ինչպիսին է Նաւասարդեանը: Ան աւելցուց ըսելով, որ «եթէ Հ.Մ.Ը.Մ.ը չառնէ այս նախաշեռնութիւնը, ուրիշ ոչ որ պիտի առնէ»:

Վերոնշեալ ամերիկեան կազմակերպութիւնը Նաւասարդեանի փառաբանին ունեցաւ իրեն յարուստ կրպակը, ուր մասնագիտական խորհրդատուութիւն փրամադրեց շահագրգիռ ծնողներուն:

Յանչնախումբի անդամները այս առիթով կոչ ուղղեցին կարիքատար զաւակներ ունեցող ծնողներուն, որպէսզի վարստին Հ.Մ.Ը.Մ.ի «Հրաշք» կոչուած նախաշեռնութեան: Անոնք աւելցուցին, որ այս աշխատանքը մեծ ծախսեր կը պահանջէ եւ թէ իրենք արդէն իսկ աշխատանքի լծուած են այդ ուղղութեամբ: Անոնք շեշտեցին նաեւ, որ «Հրաշք» այս աշխատանքներուն շնորհիւ կը սրբաբանէ անհրաժեշտ խարսխը, կառոյցը (մասնագէտներ, զօրակցող ծնողներ, մեթոյաբանութիւն), որպէսզի դառնայ մնայուն. աշխատանքները շար յուսադրիչ են:

«Հրաշք» նոր սկսած է եւ կասկած չկայ, որ շուտով ան պիտի արժանանայ քաղաքացիական գործունէութեան անվերապահ քաջալերանքին եւ գուրգուրանքին: Այդ երեխաները մեր ազգին զաւակներն են ու Հ.Մ.Ը.Մ.ի պարտականութիւնն է, իր չափով, փրութիւն ընել անոնց, անոնց դիմաց բանալով մարզական աշխարհի բոլոր վայելքներն ու հպարտութիւնը միաժամանակ:



կականութիւն եւ փոփոխութիւն, որոնց արդիւնքն է յաջողութիւնը: Պատուաբեր անցեալից դէպի յաղթական ապագայ. սա՛ է Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նշանաբանը», ըսաւ ան ու եզրափակեց հետեւեալ խօսքերով. «Այս Նաւասարդեան տօնակատարութիւնը, մեր 30 հազար հաշուող ուժեղ ընտանիքը եւ անհերքելի գործունէութիւնը կը փաստեն, թէ մենք հաւատարիմ ենք Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրների կտակին եւ տեսլականին, հաւատարիմ ենք «Բարձրացիր- բարձրացուր» նշանաբանին: Թող Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ դարը համընթաց լինի մեր հայրենիքի նորանոր յաջողութիւններին եւ Հ.Մ.Ը.Մ.ը լինի կարեւոր մի մասը հայրենիքի վերականգնման ճանապարհին»:

Պաշտօնական բաժինին վերջին խօսքը արտասանեց Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ան իր խօսքին փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին օրհնութիւնը, ապա փառք տուաւ Աստուծոյ, որ այս տարի կը տօնախմբենք թէ՛ Հայաստանի Հանրապետութեան եւ թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակները:

Առաջնորդը գոգաբան մը գծեց Ա. հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի

գոյգ ծնունդներուն միջե՛ւ՝ ընդգծելով մեր ժողովուրդին գոյատեւելու կամքը: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը 100 տարեկան է, սակայն «100 տարեկան երիտասարդ մըն է Հ.Մ.Ը.Մ.ը, որ ծնած է իբրեւ երիտասարդ, գործած է ու պիտի գործէ իբրեւ երիտասարդ»: Հ.Մ.Ը.Մ.ը երիտասարդ է իր անդամներով, երիտասարդ է իր վարչականներով, մարզիկներով ու համակիրներով, եւ ուժականութիւնը ունի երիտասարդ պահելու բոլոր անոնք, որոնք կը մտնեն իր դրօշին տակ, անոնց մէջ հաստատ կը պահէ երիտասարդական եռանդն ու կամքը, հայ եկեղեցոյ, հայ ժողովուրդին ու մայր հայրենիքին ծառայելու հաւատքը, կամքը, կորովը, սէրն ու նուիրումը»:

Առաջնորդ սրբազանը նաեւ փառքով ու պատիւով նշեց Հ.Մ.Ը.Մ.ի երախտաւորները, ապա ողջունեց այս տարուան պատուոյ նախագահը եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը: Ան եզրակացուց՝ ըսելով. «Ապրին, հազար ապրին Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկները, սկսողներն ու անոնց հոգածութեան լծուած բոլոր ծնողներն ու պատասխանատուները: Թող Նաւասարդեաններու տողանցքներն ու անոնց ճամբով շահուած մրցանակները իբրեւ

պատիւ բաշխուին ողջ հայութեան, բոլորիս սիրտերն ու հոգիները լեցնեն հպարտութեամբ, որպէսզի յառաջիկայ 44-րդ եւ անոր յաջորդող Նաւասարդեաններուն եւս, բարձրաճակատ բարձրացնենք Հ.Մ.Ը.Մ.ի եռագոյն դրօշը, հայութեան երթը շարունակենք աննահանջ, մինչեւ որ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերդին բառերով՝ նահատակ ցեղի անմահներն ու անոնց հաւատարիմ ժառանգորդները այդ դրօշը կոթողեն հայկական հեռագոյն լեռներուն ու Արարատի գագաթներուն, ու իրականացնեն 100-ամեայ հանրապետութեան ամէնէն նուիրական պատգամը՝ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանը»:

ՏՈՂԱՆՑԻԸ

Առաջնորդին խօսքէն ետք սկսաւ այնքան սպասուած տողանցքը՝ առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին: Շրջանային խմբապետուհի քոյր Շարլին Գէօզալեանս պաշտօնապէս արտօնութիւն ստացաւ եղբ. Մանուէլ Մարտիկեանէն՝ սկսելու տողանցքը:

Առաջին կարգով դաշտ մտան «Հրաշք»ի երեխաները՝ իրենց մասնագէտ հոգատարներուն եւ ծնողներուն հետ: Այս երեխաներն ու պատանիները, բարձր բռնած Հ.Մ.Ը.Մ.ի ու «Հրաշք»ի վահանակները՝ ցնծութեան եւ մանաւանդ յուզումի ալիքի, աւելի ճիշդ՝ «ցունամի»ի մէջ առին ամբողջ մարզադաշտը: Հազարաւոր ներկաները ինքնաբոլոս ոտքի ելան մէկ մարդու նման եւ խելայեղ ծափողջոյններով դիմաւորեցին այս խումբը: Իսկ «Հրաշք»ի երեխաներն ու պատանիները, իրենք եւս լայն ժպիտներ իրենց դէմքերուն՝ ցնծութեան մէջ էին նոյնպէս: Ուրախութիւնը կը փայլատակէր անոնցմէ՛ իւրաքանչիւրին՝ դէմքին՝ այնքան ինքնաբոլոս, այնքան անմեղ ու միաժամանակ խանդավառ: Ժողովուրդը իր ծափողջոյններով, յուզումի ալիքին մէջ, գրկաբաց ընդունեց այս թերաճ մանուկները՝ իբրեւ մեր

հասարակութեան ու մեր միջավայրին լիարժէք անդամները:

Յուզումի այս ալիքին յաջորդեց հպարտութեան մթնոլորտ մը, երբ կարգապահ շարքերով եւ շեփորախումբի կշռոյթներով դաշտ մտաւ համա-Հ.Մ.Ը.Մ-ական 11-րդ բանակումին մասնակից շրջանի սկաուտական 180 հոգինոց խումբը: Խումբը տողանցելով կանգ առաւ պատուոյ թրիպիւնին դիմաց եւ սկաուտական բարեւոյ ողջունեց պաշտօնական հիւրերը:

Օրուան հանդիսավարները մէկ առ մէկ ներկայացուցին իւրաքանչիւր մասնաճիւղ, երբ անոնց մարզիկները, սկաուտներն ու վարչականները շարքերով մուտք գործեցին մարզադաշտ:

Կլենտէյի «Արարատ» մասնաճիւղի բազմանդամ խումբը տողանցելով մտաւ դաշտ ու հասնելով պատուոյ թրիպիւն՝ յուշանուէր մը յանձնեց պատուոյ նախագահ տէր եւ տիկ-

Համլէթ եւ Կրեթա Չրախչեաններուն, տրուած ըլլալով որ պատուոյ նախագահը նոյնինքն «Արարատ» մասնաճիւղին մէջ գործած է երկար տարիներ:

Ներկաները ծափողջոյններով գնահատեցին նաեւ Լոս Անճելըսի մասնաճիւղը, երբ այս անգամ անոր անդամները յուշանուէր մը փոխանցեցին տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Գօգօ Պալեանին՝ իր կարգին նոյն մասնաճիւղին մէջ տասնամեակներով ծառայած ըլլալուն համար:

Մինչ շեփորախումբը կը շարունակէր ազգային-հայրենասիրական երգերու եղանակներով իր կշռութաւոր կատարումը, մասնաճիւղերը իրարու կը յաջորդէին, մեծ ու փոքր, տարեց վարչականներն ու մանուկ գայլիկներ, արծուիկներ, մարզիկներ, բոլորն ալ՝ իրենց տարազներով, իսկ մարզիկներէն ումանք՝ իրենց շահած բաժակներով: Իւրաքանչիւր մասնաճիւղ տար-

բեր խանդավառութեամբ, ցնծութեան տարբեր աղաղակներով կը դիմաւորուէր ներկաներուն կողմէ: Խանդավառութիւնը համընդհանուր էր եւ սեւեց գրեթէ մէկ ժամ:

Տողանցքի աւարտին, եղբ. Վարանդ Աւանէսեան (Երիտասարդական միաւորէն) ներկաներուն հրամցուց խանդավառ երգերու փունջ մը՝ երկարատեւ ու տպաւորիչ հրավառութեան ընկերակցութեամբ, երբ արդէն մութը սկսած էր տիրել: Ապա, Շրջանային Վարչութիւնը հիւրասիրութեամբ մը պատուեց պաշտօնական հիւրերը:

Նաւասարդեանի փառատօնը շարունակուեցաւ վարժարանի միւս բակերուն մէջ՝ երաժշտական տօնախմբութեամբ եւ իր աւարտին հասաւ կէս դիշերին:

Լուսանկարներ՝ Պերժ Ծամճեանի


ARMENIA

for private and group trips


www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages




WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY




Armavia
Արմավիա


Photos: © Yann Artus-Bertrand, La Ferre, rue du Ciel. Licence 075 960031. Studio MICKA 2005 2005




11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com



48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com



67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr



32-38, rue Hambedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
saber@arminco.com



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՌՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄ` 154 ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ

**Թղթակից
ԼՈՍ ԱՆՃԵԼՍԸ**

27⁻²⁹ Ապրիլի շաբաթավերջին, էքթըրնի KOA բանակավայրին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանային բանակումը, մասնակցութեամբ 154 սկաուտներու՝ արի-արեւոյշներ եւ գայլիկ-արծուիկներ:

Բանակումին կը մասնակցէին Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի, Ուոլնաթ Բրիքի, Սանթա Բլարայի, Ֆրեզնոյի, Լաս Վեկասի, Սան Ֆեռնանտո հովիտի, Լոս Անճելլոսի, Կլենտէյլի, Փասատինայի, Ինըրտ Էմփայրի, Լա Բրեսենթայի եւ Պրրպէնքի մասնաճիւղերը:

Բանակումը առիթ մը հանդիսացաւ, որպէսզի ոչ միայն Հ.Մ.Ը.Մ.ական, սկաուտական ջերմ մթնո-

լորտ մը ստեղծուի մասնակիցներուն միջեւ, այլեւ՝ նոր գիտելիքներով օժտուին անոնք, յատկապէս աչքի առջեւ ունենալով, որ նոյն այս սկաուտներէն մեծ խումբ մը Հայաստանի մէջ պիտի մասնակցէր համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին:

Բանակումի խմբապետուհին էր քոյր Շարլին Գոգալեանս (Շրջանային Սկաուտ Սորհուրդէն), իսկ փոխ խմբապետուհին՝ քոյր Քրիստինա Դաշդեմիրեան («Արարատ» մասնաճիւղէն):

Առաջին օրը, առաւօտուն, դրօշակի արարողութենէն եւ նախաճաշէն ետք տեղի ունեցաւ տարագներու ստուգում եւ պայուսակներու պատրաստութիւն: Ապա, տեղի ունեցաւ տողանցքի փորձ, որմէ ետք բանակող սկաուտներուն տրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի կառուցին, բանակումի ղեկավարման եւ կազմակերպման մասին գիտելիքներ:

Կէսօրէ ետք կազմակերպուեցան գործնական դասընթացքներ՝ հանգոյցներու ձեւերու մասին: Տեղի ունեցաւ նաեւ երգեցողութիւն, ապա բանակողներուն տրուեցան յայն տե-



ղեկութիւններ՝ ճամբորդութիւններու, բանակավայրի օրէնքներու եւ գործունէութեան, ինչպէս նաեւ՝ լեզուական տարբերութիւններու մասին:

Երեկոյեան, բնականաբար, տեղի ունեցաւ խարուկահանդէս, սկաուտական ջերմ մթնոլորտի մէջ, ապա՝ կէս գիշերային արշաւ, որ նոր փորձառութիւն մը եղաւ շատերուն համար:

Բանակումին յաջորդ օրը, յաւելեալ 90 սկաուտներ միացան բանակողներուն, միասնաբար ոգեկոչելու համար Հայոց Յեղասպանութիւնը եւ սոցալիստական Մայիս 28-ի հարիւրամեակը:

Այս իմաստով, գայլիկներն ու արծուիկները ձեռային աշխատանքներու միջոցով սորվեցան Յեղասպանութեան եւ համապատասխան յուշարձաններու մասին:

Յատկապէս այս առիթով բանակավայր ժամանած Սերոբ Աբրահամ-



եանն ու Տիգրան Խոտանեանը բանակողներուն ներկայացուցին Հայաստանի ներկայ կացութիւնը եւ թէ ինչո՞վ ան կ'առնչուի մեր երկրի անկախութեան:

Դարձեալ դաստիարակչական ծի-

րէն ներս, միաւորի եւ խմբապետական կազմը արի-արեւոյշներուն սորվեցուցին «Քոչարի» պարը ու անոր պատմութիւնը:

Բանակումը իր աւարտին հասաւ գեղեցիկ յիշատակներով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԳ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՏԱՐԱԶՈՎ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու չորս մարզիկներ այս տարի պիտի մրցին Հայաստանի պասքեթպոլի 20 տարեկանէն վար ազգային խումբի կազմէն ներս:

Անոնք կու գան երեք մասնաճիւղէ. Ալեքս Իսկէնտէրեան՝ «Մասիս», Գաբրիէլ Աճէմեան՝ «Ազատամարտ», Փաթրիք Փանոսեան եւ Քրիստափոր Քիւրտօղլեան՝ «Շանթ» մասնաճիւղէն: Անոնցմէ երեքը արդէն իսկ Հայաստանը ներկայացուցած են պասքեթպոլի իրենց տարիքային դասակարգի միջազգային մրցումներուն: Իսկ Փաթրիքի պարագային, ան առաջին անգամ ըլլալով մաս պիտի կազմէ Հայաստանի ազգային խումբին:

Կրակոտ աչքերով, իսկական մարզիկի կազմուածքով եւ Հ.Մ.Ը.Մ.ականի սքանչելի շունչով տղաք են չորսն ալ: Իրենց հետ մեր հանդիպումը կայացաւ Շրջանային Վարչութեան կեդրոնատեղիին մէջ, ուր անոնք հաստատեցին իրենց նուիրումը թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ին եւ թէ՛ մանա-



ւանդ Հայաստանի ազգային խումբին: Բոլորն ալ ցարդ խաղացած են իրենց դպրոցի, քոլէճի կամ Հ.Մ.Ը.Մ.ի կազմերէն: Բայց Հայաստանը ներկայացնե՞լ...:

«Առաջին անգամ»ը միշտ ալ ուրիշ արժէք ունի: Ինծի համար մեծ պատիւ էր խաղալ Հայաստանի ազգային տարազը կրելով, կ'ըսէ Ալեքսը՝ շարունակելով. «Անբեւեակայելի էր իմ առաջին մասնակցութիւնս Կիպրոսի դէմ, երբ շարքին մէջ կանգնած, յուզումով կ'ունկնդրէի Հայաստանի ազգային քայլերդը»: Իսկ Գաբրիէլին համար, Հայաստանի ազգային խումբէն խաղալը «ամէն բանէ առաջ հայրենիքի պատիւը բարձր պահելն էր»: Ան 2 տարիէ ի վեր մաս կը կազմէ Հայաստանի իր տարիքային դասակարգի ազգային խումբին ու կը յիշէ Իրանի եւ Մոնթենեգրոյի դէմ խաղերը, մանաւանդ Հայաստանի ազգային խումբին շապիկը կրելը:

Փաթրիքը այս ամառ առաջին անգամ ըլլալով մաս պի-



տի կազմէ Հայաստանի ազգային խումբին եւ արդէն իսկ «անհամբեր է»: Իրեն համար արտակարգ զգացում է դաշտերուն վրայ Հայաստանը ներկայացնելը:

Հ.Մ.Ը.Մ. ի խումբերուն մէջ իրենց փորձառութիւնը օգնած է արդեօք: Չորսն ալ անվարան կը պատասխանեն՝ այո՛: Թէեւ 20 տարեկանէն վար միջազգային մրցումներու օրէնքները կը տարբերին ամերիկեան NBA-ի կամ քոլէճներու օրէնքներէն, այսուհանդերձ, իրենց հաւաքական փորձերուն ընթացքին ան շուտով ընտելացած են անոնց: Փաթրիք կ'ըսէ, թէ իրենք պատրաստ են Ֆիզիքական տոկունութիւն պահանջող այս մրցաշարքին, Հայաստանի կազմին հետ:

Նոյն հարցումին պատասխանելով, անոնք ըսին, թէ Հ.Մ.Ը.Մ. ի մէջ մէկ կարեւոր բան սորված են՝ ինչպէս յաղթահարել դժուարութիւնները: Կան նաեւ գործնական դժուարութիւններ: Հայաստանի կազմին մէջ կան հայաստանածին մարզիկներ, կան նաեւ Ռուսիայէն մարզիկներ: Այս բոլորը հաւաքական կամքի վերածելու խնդիր կայ: Կայ նաեւ... լեզուի դժուարութիւնը, որովհետեւ



տեւ կան մարզիկներ, որոնք հայերէն լաւ չեն գիտեր, ուրիշներ՝ անգլերէն չեն գիտեր ու միայն ռուսախօս են: Ուրեմն, լեզուական դժուարութիւնը ինչպէս պիտի յաղթահարեն... բոլորն ալ անմեղօրէն կը խնդան՝ կարծես ըսելով. «Հոգ մի՛ ընէք, մենք զիրար կը հասկնանք...»:

Այս տղաքը շուտով պիտի մեկնին Պուլկարիա, միանալու Հայաստանի կազմին: Մէկ ամիս միասին պիտի մարզուին օրական երկու անգամ, միասին պիտի ճաշեն ամէն օր, իրարու պիտի ընտելանան, մտերմանան եւ միասնաբար պիտի պայքարին՝ յանուն Հայաստանի դրօշին:

Բոլորն ալ կը հաստատեն՝ երբեմն իրարու բերնէ խօսք խլելով. «Հայաստանի համար խաղալը, դաշտերուն վրայ հայրենիքը ներկայացնելը ամբողջութեամբ ուրիշ փորձառութիւն է, որուն համար պատրաստուած ենք Հ.Մ.Ը.Մ. ի մէջ»:

Ահաւասիկ, թէ ինչպէ՛ս Հ.Մ.Ը.Մ. ի ցանած սերմերը ի սպաս կը դրուին հայրենիքի մարզական ընդհանուր ճիգերուն: Ասոր համար հպարտ են չորս մարզիկներն ալ:

with the complements of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀՐԶԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ԲԱՅՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւն ԱԹԵՆՔ

Հայաստանով ու աշխարհով մէկ Հ.Մ.Ը.Մ.ը կը տօնէ իր հիմնադրութեան պանծալի 100-ամեակը՝ իր տուրքը մատուցանելով մեր ազգի փառապանծ անկախութեան 100-րդ տարեդարձին:

Աշխարհի չորս կողմերուն տարածւած իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի գոյգ տօնն է եւ հպարտութիւնը միաժամանակ:

Ահա այս նշանակալից թուականին գոզգոզիպեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի 95 տարիներու պատմութեան արժանաւայել միաւորումը իր յարմարագոյն տեղը՝ արդի գրասենեակ-թանգարանին մէջ, Գոքինիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ կից գտնուող յատուկ սրահին մէջ: Սրահը սիրալոյսով կերպով տրամադրուեցաւ շրջանի թաղային խորհուրդին կողմէ:

Ի՞նչ կը պարունակէ այս թանգարան-գրասենեակը: Հոն տեղ գտած են Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի ատենադրութիւններ, տեղեկագիրներ, նամակներ, ժողովներու արձանագրութիւններ, յուշատախտակներ, վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու նկարներ, կանոնագիրներ, բանակումներու արխիւներ, ձեռնարկներ, յայտագիրներ, համագումարներ, մարզախաղներ: Պարզ խօսքով՝ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանին ամբողջ պատմութիւնը:

Պատմութիւն մը՝ որ տրամադրելի է բոլորին, անոնց, որոնք կ'ուզեն բան մը աւելի իմանալ մեր միութեան անցեալին մասին, անոնց համար, որոնք կ'ուզեն ուսումնասիրել մեր պատմութիւնը, անոնց համար, որոնք կ'ու-



զեն հպարտանալ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի փառաւոր պատմութեամբ:

Այս հաւաքածոն կը պարտինք Հ.Մ.Ը.Մ.ի նուիրեալ անդամ եւ շրջանի պատուոյ նախագահ հանգուցեալ եղբ. Կարպիս Գուլումճեանին, որ բժախնդիր եւ հետեւողական կերպով, երկար տարիներու ընթացքին հաւաքեց եւ դասաւորեց պատմական բոլոր արխիւները, տարբեր տարեշրջաններու եւ հատուածներու դասաւորումը ըրաւ ու ամբողջացած կերպով պահեց մինչեւ իր կեանքին վերջին պահը՝ այն թաքուն երազանքով, որ օր մը իր յաջորդները պիտի իրականացնեն մէկ տեղ հաւաքելու երազն ու պարտականութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի թանգարան-գրասենեակին բացումը տեղի ունեցաւ Կիրակի, 6 Մայիսի առաւօտուն: Նախ, Գոքինիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ միութեան անդամ մեկնած

անդամներու հոգիներուն համար: Պատրաստուած սգաբեմին վրայ տեղ գտած էին Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը եւ վաստակաւոր սկաուտի մը գլխարկը: Իսկ Գոքինիոյ եւ Յիքսի սկաուտները պատուոյ ջոկատ մը կազմած էին եկեղեցւոյ մէջ: Հոգեհանգստեան արարողութեան նախագահեց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան, որ իր ոգեշունչ քարոզին մէջ վեր առաւ Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութիւնը հայութեան համար ու իր յարգանքի տուրքը մատուցեց վաստակաւոր բոլոր անդամներուն, որոնք գործեցին ու անցան:

Այնուհետեւ, համախմբուած ժողովուրդը, Հ.Մ.Ը.Մ.ի անդամները, վարչականները, երէց եղբայրները եւ սկաուտները ուղղուեցան սրահ, ուր Սրբազան Հօր ձեռամբ կատարուեցաւ պաշտօնական բացումը: Հոն էին նաեւ մեր վաստակաւոր անդամներու՝ Պետրոս եւ Լեւոն Գայեաններու, Կարպիս Գուլումճեանի, Գրիգոր եւ Պերճ



Գիզիրեաններու եւ այլոց հարազատները:

Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սերգօ Աղապատեան, որ ընդգծեց այս նախաձեռնութեան նշանակութիւնը: Խօսք առաւ նաեւ Ազգային Վարչութեան ատենապետ, Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Պօղոս Չոլաքեան: Ապա, Առաջնորդը եւ Արշաւիր Գուլումեան կտրեցին ժապաւէնը եւ բացին Կարպիս Գուլումեանի պատկերը, որուն անունով այլեւ կը կոչուի սրահը: Կարգացուեցաւ նաեւ նախորդ Շրջանային Վարչութեան որոշումը՝ սրահը Կարպիս Գուլումեանի անունով կոչելու:

Բացման հանդիսութեան ակար-

տին, Առաջնորդը անգամ մը եւս իր խօսքը ուղղեց ներկաներուն եւ շնորհակտրեց Գուլումեան ընտանիքին անդամները, որոնք Հ.Մ.Ը.Մ-ին տրամադրեցին իրենց հօր արխիւները: Ան նշեց, թէ նման հարուստ հաւաքածոներ իրենց արժէքը կը ստանան, երբ բոլորը կ'արժեւորեն այդ պատմութիւնը, կը սերտեն եւ կ'ուսումնասիրեն իրենց անցեալը եւ ապագային համար նոր ծրագիրներ կը մշակեն: Առաջնորդը կոչ ուղղեց Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր վարչականներուն՝ միութեան 100-ամեայ պատմութեան ճամբէն քալելու եւ նոր նուաճումներով սատարելու անոր ազգանուէր գործին: Առաջնորդը եւ բոլոր խօսողները, յատուկ արտայայտութիւններով, իրենց

գնահատանքը յայտնեցին Գոքինիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ թաղային խորհուրդին, որ սիրայօժար կերպով սրահը տրամադրեց Հ.Մ.Ը.Մ-ին:

Պէտք է նշել, որ Հ.Մ.Ը.Մ-ի ըսկառուները օրեր առաջ պատրաստած էին յատուկ ձեռագիր աշխատանք եւ կանգնեցուցած էին փառաւոր դարպաս մը եկեղեցւոյ բակին մէջ:

Ելոյթին յաջորդեց հիւրասիրութիւն, որուն ընթացքին եղան մտերմիկ զրոյցներ եւ շնորհակտրանքներ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան, որ կարողացաւ իրագործել իր պատմութիւնը մարմնակորոզ այս կարեւոր նուաճումը:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԳՈՔԻՆԻՈՅ ՎՈՂԻՊՈՂԻ ԽՈՒՄԲԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՏԻԿԷՒ ԱԽՈՅԵԱՆ

Թղթակից
ԳՈՔԻՆԻՍԻ

Արեւմտեան Ատիկէի վոլիպոլի ախոյեան հռչակուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Գոքինիոյ խումբը:

Աւարտական մրցումը տեղի ունեցաւ Կիրակի, 1 Ապրիլ 2018-ին, Ռենտի ծայրէ ծայր մարզասէրներով լեցուն գոց մարզադաշտին մէջ:

Հ.Մ.Ը.Մ-ի «Խրիսթօ Ռումեան» խումբը 3-1 արդիւնքով (25-16, 23-25, 25-14, 25-15) յաղթեց Փեթրուփոլի խումբին եւ վերջին չորս տարուան ընթացքին երրորդ անգամ ըլլալով բաժակակիր հռչակուեցաւ:

Մարզասէրներու քաջալերանքը աւարտական մրցումը տօնի վերածեց: Մրցումը չսկսած՝ Համագայինի «Նանօր» եւ «Նայիրի» պարախումբերը հայկական պարեր պարեցին, ծափահարուեցան եւ մեծ խանդավառութիւն ստեղծեցին մարզադաշտին մէջ:

Երկու խումբերու մարզիկները մարզադաշտ մուտք գործեցին Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական խումբի մը ընկերակցութեամբ:

Աւարտական մրցումին հետեւեցան վոլիպոլի միութեան նախագահ Քոկայիտիս Եորդոս, միութեան փոխ նա-



խագահ Քոկայիտիս Լեֆթերիս, Նիքէա Ռենտիի քաղաքապետարանի մշակոյթի եւ մարզանքի փոխ քաղաքապետ Պաքացելոս եւ վոլիպոլի իրաւարարներու միութեան նախագահ Մաւրիքիտիս: Յաղթական խումբին բաժակը յանձնեց Զիու Զիցուի միջազգային ախոյեան Արա Ճանիկեան:

Նշենք, որ վերջերս Հ.Մ.Ը.Մ-ի վոլիպոլի խումբը կարողացաւ մրցաշարքի ախոյեանութեան տիտ-

ղոսին տիրանալ՝ խումբը հասցնելով դասակարգի բարձրացման սահմանին, Ազգային Ը2 դասակարգին մօտենալով: Այս յաղթանակները շատ մեծ կարեւորութիւն ունին Հ.Մ.Ը.Մ-ին համար, մանաւանդ այս տարի, երբ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակը կը տօնուի:

Խումբին մաս կը կազմեն հետեւեալ մարզիկները՝ Ալեքսանտրոս Քաքրիտիս Ռումեան, Փանայոթիս Քաքրիտիս Ռումեան, Ադամ Զալքեան, Տիմիթրիս Միցիս, Վասիլիս Միցիս, Եորդոս Քացաունիս, Իլիաս Քարաս, Փլաթոնաս Միխայիլովիչ, Սփիրոս Քոսթանտաքոփոլոս, Թանոս Սախինիտիս, Վազգէն Սաւուլեան, Գարեգին Պետրոսեան եւ Եորդոս Քանտիտիս:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՀՐՋԱՆԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԲԱՅԻՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան Մամուլի Յանձնախումբ

ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, 29 եւ 30 Յունիս 2018-ին, Լաթաքիոյ մէջ տեղի ունեցան միջ-մասնաճիւղային մարզախաղեր, որոնք ընդգրկեցին ֆուտպոլ, պասթեթպոլ, լող, ճատրակ եւ փինկ-փոնկ: Ըստ կարելիութեան, մրցաշարքին մասնակցեցան ՀՄԸՄ-ի Հալէպի եւ Լաթաքիոյ մասնաճիւղերու 14-16 տարեկան մարզիկներն ու մարզիկուհիները:

29 Յունիսի առաւօտեան, ՀՄԸՄ-ական մարզիկները նախ ուղղուեցան Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցի, ուր իրենց աշխատանքները սկիզբ առին աղօթքով: Այնուհետեւ, անոնք համախմբուեցան Լաթաքիոյ ակումբին սրահը, ուր տեղի ունեցաւ մարզախաղերուն պաշտօնական բա-



ցումը՝ «Յառաջ նահատակ» քայերգով: ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան Դեռնարկին ներկայ էին տոբթ՝ Մինաս Պալեան եւ Յովիկ Սիւլահեան:

Բարի դալուստի խօսք արտասանեց ՀՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Յա-

րութ Գաբրիէլեան՝ ողջունելով ՀՄԸՄ-ականներու աշխոյժ ներկայութիւնը: ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Յովիկ Սիւլահեան, յայտնելով որ սուրիական պատերազմին անցնող տարիներու տագնապալի վիճակը երբեք պատճառ չդարձաւ ՀՄԸՄ-ի մարզական կեանքին նահանջին, ընդհակառակն՝ ՀՄԸՄ-ական մարզիկները աւելի կառչեցան իրենց միութեան, բազմացուցին իրենց մարզական փորձերը եւ լաւ պատրաստութեամբ ներկայացան այս մարզախաղերուն:

Եղբ. Սիւլահեան իր խօսքին մէջ շնորհաւորեց միութեան 100-ամեակը եւ մաղթեց, որ 100-ամեակի սերունդը, որ պատիւը ունեցաւ ՀՄԸՄ-ի դրօշը ստանձնելու, աւելի խրոխտ շարքերով զայն փոխանցէ գալիք սերունդներուն:

Առաջին օրը տեղի ունեցան հետեւեալ մրցումները-

- Ֆուտպոլի մրցում՝ Հալէպ-Լա-





կան ջերմ վերաբերմունքը, շնորհաւորեց մետալակիր մասնակիցները եւ մարզական կեանքին մէջ յարատեւ վերելք մաղթեց անոնց: Ապա, ան շնորհակալութիւն յայտնեց Լաթաքիոյ հիւրընկալ մասնաճիւղին եւ մարզախաղերու յաջողութեան իրենց ներդրումը բերած Հ.Մ.Ը.Մ-ական մարզիչներուն:

Այնուհետեւ տեղի ունեցաւ բաժակներու եւ մետալներու տուչութիւն:

Օրուան եզրափակիչ պատգամը փոխանցեց Խորէն Քհնյ-Պէրթիզեան, որ մեծապէս ողջունեց միջ-մասնաճիւղային մարզախաղերու իրադրոժումը եւ յարատեւ յաջողութիւն եւ համագործակցութիւն մաղթեց Հ.Մ.Ը.Մ-ական նորահաս սերունդներուն:

Թաքիա, որ վերջ գտաւ 5-4 արդիւնքով՝ ի նպաստ Հայէպի:

- Պասքեթպոլի աղջկանց մրցում՝ Հայէպ-Լաթաքիա, վերջ գտաւ 38-15 արդիւնքով՝ ի նպաստ Հայէպի:

- Պասքեթպոլի տղոց՝ մրցում Լաթաքիա-Հայէպ, վերջ գտաւ 65-72 արդիւնքով՝ ի նպաստ Հայէպի:

Երկրորդ օրուան մրցումները պարզեցին հետեւեալ պատկերը-

- Փինկ-փոնկի մրցում, որուն առաջնութիւնը խլեցին Լաթաքիոյ մասնաճիւղին մարզիկները:

- Ճատրակի մրցում, որուն առաջնութեան տիրացան Հայէպի մասնաճիւղին մասնակիցները:

- Լողի մրցում, որ տեղի ունեցաւ Լաթաքիոյ մասնաճիւղի լուզորդներուն միջեւ:

30 Յունիս 2018-ի երեկոյեան, Լաթաքիոյ ակումբի սրահին մէջ տեղի ունեցաւ մարզախաղերու փակման հանդիսութիւնն ու մետալներու տուչութիւնը:

Հանդիսութիւնը բացուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջ նահատակ» քայլերգով: Հանդիսավարն էր պասքեթպոլի մարզիչ քոյր Մակի Տօնա-

պետեան-Աբրահամեան, որ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յովիկ Սիւլահեանը արտասանելու Շրջանային Վարչութեան խօսքը:

Եղբ. Սիւլահեան գնահատեց մարզախաղերուն մասնակից քոյրերուն եւ եղբայրներուն Հ.Մ.Ը.Մ-ականի մարզական բարձր ոգին եւ եղբայրա-



100-ԱՄԵԱԿԻ ՄԻՋ-ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԸ

6 Յունիսին, Հայաստանի Հանրապետության ըՄ-փիլոսոփի նախարարության կեղրոնին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակի տօնակատարութիւններու եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումի աշխատանքներու համակարգման համար ստեղծուած պետական, միջ-գերատեսչական յանձնախումբին երկրորդ նիստը:



Նիստին մասնակցեցան Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեան, նախարարի տեղակալ Բարգէն Տէր Գրիգորեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Օշին Փիրումեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ստեղծապետ եղբ. Դաւիթ Յակոբեան, ներկայացուցիչներ՝ Հայաստանի արտաքին գործոց, կրթութեան եւ գիտութեան, մշակոյթի, առողջապահութեան, փոխադրութեան, կապի եւ տեղեկատուական արհեստագիտութիւններու, մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարարութիւններէն, Հայաստանի ոստիկանութենէն եւ Երեսնի քաղաքապետութենէն:

Բացման խօսքով հանդէս եկաւ Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեան: Ան րատ, որ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած տօնակատարութիւնները եւ 11-րդ բանակումը պիտի կատարուին յաւուր պայքաւ եւ բարձր մակարդակով: «Անգնահատելի եւ անորոշանալի է Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայապահպանութեան,

Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման եւ սկաուրական շարժման զարգացման մէջ», նշեց նախարար Հայրապետեան:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ստեղծապետ եղբ. Դաւիթ Յակոբեան տեղեկացուց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութիւնը նախորդող

օրերուն հանդիպումներ ունեցած է Հայաստանի նախագահին, վարչապետին, պաշտպանութեան եւ Սփիւռքի նախարարներուն հետ եւ միտքեան 100-ամեակի բոլոր ծրագիրները բնականոն ընթացքի մէջ են:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Օշին Փիրումեան ներկայացուց 100-ամեակի ծրագիրը եւ բննարկման միջոցով բոլոր գերատեսչութիւններու ներկայացուցիչները ճշդեցին իրենց կատարելիքները եւ նախաշեռնութիւններու վերջնական ժամանակացոյցը: Եղբ. Փիրումեան յայտնեց, որ 19-29 Յուլիսին Հայաստան պիտի գրնուին 22 երկիրներէ 1200 սկաուրներ, իսկ բանակումը տեղի պիտի ունենայ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Բիրականի բանակալայրին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի նամականիշի հրատարակման մասին զեկուցեց Հայաստանի փոխադրութեան, կապի եւ տեղեկատուական արհեստագիտութեան նախարարութեան աշխատակազմի նամակատան վարչութեան պետ Ծովինար Գալստեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Բ. կողքէն

Այս առիթով, նախարար Հայրապետեանի հետ բննարկուեցան միտքեան 100-ամեակի տօնակատարութիւններուն համար յառաջացած միջ-գերատեսչական յանձնախումբին աշխատանքները շարունակելու կարելիութիւնները: Նախարարը դրական պատասխան տուաւ այս գծով եւ իր պատրաստակամութիւնը յայտնեց գործակցութիւնը շարունակելու Հ.Մ.Ը.Մ.ին հետ:

Յայտնենք նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան պատուիրակութիւն մը, բաղկացած ստեղծապետ եղբ. Գառնիկ Սկրիչեանէ, անդամներ Բագրատ Եսայեանէ եւ Անդր Պահարեանէ այցելեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին:



HOMENET MEN

LEBANESE CUP & LEAGUE CHAMPIONS

